



ԺԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 14

24 ՓԵՏՐՎԱՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վրամ

«Աւուդ»ը, Յ. Զիննիրնեան, Յակոբ Յական

Յորեկ

ԼԵՔՕՏ ՏԸ ԼԵԼ.Ի

Նիշէին Զոհը

ԼԵՈՆԻՏ ԱՆՏՐԻԷՖ.Ի

Քրանիկ

Սիեմիեվից Եւ իր Նոր Վեպը

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԱՐԱՍ ԱՆՏՈՆԵԱՆ

ՌՈՒԲԷՆ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Ե. Ա.

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԵԱՆ

1907

ՊԱԼՔԱՆ

ԱՌՍՆՁՆԱՇՆՈՐԶԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

Դրամագլուխ և պահեստ ֆրանք 9,500,000

Վերապահովագրական

Դրամագլուխ և պահեստ » 142,740,00

ՊԱԼՔԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն. , Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ զիւրաւատչելի պայմաններով . իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիններով և պայմաններով օժտուած է . կը կատարէ խառն ապահովագրութիւն , ընտանեկան , մանուկներու , եւն. եւն. :

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ

Ղալաթիա, Տեօյլէ Օրիէնդ Պանքի կից, Արմասուն Խան. (2)

Հանգուցեալ Կարապետ էֆ. Իսթիւճեանի թարգմանած հետեւեալ հետաքրքրական գիրքերը կը ծախուին բոլոր հայ գրաւաճառներու քով . Կեդրոնատեղի Աշտեան գրատուն :

Ընտանեկան Գաղտնիքներ 3 հատոր	15 ՂՐՆ .
Արուարձանին Տղան 3 հատոր	15 ՂՐՆ .
Հանրակառքին Ոճիրը	5 ՂՐՆ .
Ամուսնութիւնը Բարիգու	5 ՂՐՆ .
Քաղաքական Տնտեսութիւն . Ժօղէֆ Կառնիէ	5 ՂՐՆ .

Գ. ԶՈՐԵԱՆ ԵՒ Ս. ԴԱԼՈՒՍՏԵԱՆ

Դաւառացիներուն .— Եթէ կը փափաքիք որ տեսնուին Ձեր առեւտրական , կալուածական եւն. եւն. գործերը փորձառու և վստահելի գործակատարի մը միջոցաւ , առիթէն օգտուելով զիմեցէք վերոյիշեալ հասցէին «Կ. Պոլիս Էթմէճի Կոստ Խան» ուր կը կատարուին ամէն կարգի վաճառքներու ինչպէս նաեւ կալուածներու գնման կամ վաճառման յանձնարարութիւններ , ճշգրտահաշիւեամբ , փութկոտութեամբ : Յաճախորդներու հաշւուն միանգամայն կը գնուին (ներածութիւն) եւրոպական վաճառքներ , պատկանեալ նստահանգիստը յանձնելի փոխարժէքով , ու կը վաճառուին (արտածութիւն) տեղական բերքեր՝ իր տեղը կամ այլուր յանձնելի պայմաններով : Խիստ զիւրաւատչելի պայմաններ : Ընդարձակ տեղեկութեանց համար գիտել վերեւի հասցէին :

Ք Օ Պ Ր Ա

Կենցաղագիրտութեան էական պահանջներէն մէկն է կոյիկները ներկուած պտտիլ միշտ , ոչ թէ փոշոցը ներկել տալով զանոնք , այլ տունէն դուրս ելած ատեն իսկ՝ նստակէս անձամբ կամ սպասուհիին միջոցով ներկել տալով : Այս նպատակին համար ամբողջ աշխարհի մէջ լաւագոյնը հռչակուած ներկն է՝ ՔՕՊՐԱՆ , զոր կարելի է գտնել ամէն տեղ :

ՏՊԱՐԱՆ ՓՈՐԱԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌ

Զ Զ Օ Ն Թ Ա Թ Ա Զ Ե Ա Ն

34, 4. Պոլիս, Պապը Ալի Ջասսեսի, 34

Պատիւ ունիմ ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ Տպարանս և Փորագրատունս որ երկար ատեններէ ի վեր անդուլ գործունէութեամբ, ուղղամտութեամբ և խղճմտութեամբ Պոլսոյ և գաւառներու յարգելի յաճախորդներուս ամէնէն ճաշակաւորները անգամ գոհացուցած է, Եւրոպայէն բերել տրուած ալյաքարդերու, հրաւիրագիրներու, անվլօրնեւրու, նամակագլուխներու ևն. ևն. ճոխ մթերքով և դիւրամատչելի դիւներուն շնորհիւ պատրաստ է մրցելու բոլոր այս կարգի հաստատութեանց հետ, պատրաստելով ամէն տեսակ և ամէն լեզուէ վաճառականական պիտոյքներ, հրաւիրագիրներ, մահազդ և ընտիր այցեստոմսեր ևն. ևն. խիստ ճաշակաւոր և դիւրամատչելի:

Աստուծոյմէ զատ Փորագրատանս մէջ կը փորագրուին ամենանուրբ փորագրութիւններ, ըփիշներու և փոստաբաններու թապէլաներ մետաղէ և քաւչուէ, ամէն տեսակ կնիքներ և ստոնց վերարկեալ զանազան տեսակ մեքենաներու ճոխ մթերք մը միշտ պատրաստ կը գտնուի գործատանս մէջ:

Գաւառներէ ըլլալիք յանձնարարութիւններ փութով և ուշադրութեամբ կը կատարուին: Մէկ անգամ միայն տպարանս և փորագրատունս այցելել կը բաւէ հաստատելու համար այն բոլոր առաւելութիւնները զորս յաճախորդներու դիւրութեան համար չեմ խնայեր միշտ: ՄՐՅՈՒՄ, ՄԱՔՐՈՒԹԻԻՆ և ԴԻԻՐՈՒԹԻՆ, 2909

Հայ Ս. Եկեղեցիի հաւատացեալ ժողովուրդին դիւրութեանը համար մասնաւորապէս՝ Սահակ Ռ. Խանճեանի կողմէ պատրաստուած ամէնէն ճոխ, ամէնէն գեղեցիկ, ամէնէն ընտիր Աղօթագիրքը, որ իր 700ի մօտ էջերով կը բովանդակէ բոլոր եկեղեցական արարողութիւնները և աղօթքները, կը ծախուի ամէն տեղի համար լաթակազմը 10, ոսկեղօծը 17, փառակազմը 25 զրդ.ի: Դիմել Ջորդարեան գրատունները. Կ. Պոլիս Ջաքմաքճլարը, թիւ 34-26: Եւ Բերա Գուլէ-Գարու, թիւ 695:

Հին ՕՐԵՐ. — ՊՈՒԷՏ ԽՍԶԱՏՈՒՐ ՄԻՍԱՔԵԱՆ ԵՒ ԻՐԵՆ ԺԱՄԱՆԱԿԱՆԻՑ ԻՄԱՅԱԿՈՆԻՆ ՎՐԱՅ ՀԱՅԵԱՑՔՆԵՐ. — Յ. Գ. Մ. — Այս կենսագրական բանասիրական գործը, հրատարակուած է Սադահան տպարանէն՝ 140ի չափ էջերով, գրականութեան վրայ կարեւոր տեսութիւններով: Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով. գին 1/2 զրդ.:

Երուսաղէմի վանքին հաշիւներուն քննիչ յանձնաժողովը վերջապէս իր քննութիւնները աւարտելով Յէ մեծագիր էջերով ընդարձակ տեղեկագիր մը պատրաստելով մատուց Ս. Պատրիարքին: Տեղեկագիրը ստորագրած են քննիչ յանձնաժողովին երեք անդամները՝ Ասլանեան, Խտրեան և Սեթեան էֆէնտիները: Վահան էֆ. Սուրէնեան վերջին նիստին ներկայ չէ եղած և չէ կրցած ստորագրել, բայց իր համաձայնութիւնը յայտնած է: Քննիչ յանձնաժողովին բոլոր անդամները տեղեկագիրին պարունակած բոլոր խնդիրներուն մասին ընդհանուր համաձայնութեան մը չեն եկած և իրենց դիտողութիւնները ու կարծիքներու տարբերութիւնները նշանակած են: Այս տեղեկագիրը Ս. Պատրիարքը ներկայացուց Խաւն ժողովին: — Ինչպէս գրած էինք հանդուցեալ Իօանէսքու աղքատ տղոց դաստիարակութիւն համար 600, 100 ֆրանք կտակած է: Թողած է նաև Ճարոններէն-Հայերէն համեմատական բառարան մը, որուն մէջ Հայ և Ճարոն լեզուներու նմանութեանց վրայ կը խօսի: Իօանէսքու բաղձանք յայտնած է այս բառարանն ալ հրատարակել, կտակակատար նշանակելով Ս. Պատրիարքը: Վերջին օրերս հեռագիրով թոյլտուութիւն խնդրուեր է Ս. Պատրիարքէն՝ բարերարին մարմինը Բէռ լա Շէզի գերեզմաննոցին մէջ թաղելու և վրան դամբարան մը շինելու համար: Բարիդի աթէնէն նշանաւոր գերեզմաննոցն է աս, մէկ քառ. մէթր հողը 600 ֆրանք: Իօանէսքուի դամբարանին տեղը միայն 1200 ֆրանք պիտի արժէ, իսկ դամբարանին համար 4000 ֆրանք պիտի վճարուի: Կտակուած գումարէն դեռ որ և է բան հասած չըլլալով Պատրիարքարան, Ս. Պատրիարքը հեռագիրով հրամայած է Բարիդի Տ. Վեամլապուհ քահանային, որպէս զի բարերարին մարմինը Բէռ լա Շէզի գերեզմաննոցին մէջ պահուի և ապա փառաւոր դամբարան մը շինեն հանգուցեալին վրայ:


Մասիսի Ա. Հարցումին՝

Ինչո՞ւ ծնողներ չեն ուզեր, ընդհանրապէս, աղջիկ զաւակ ունենալ.

ստացանք բաղձաթիւ պատասխաններ, ոոյն տեսութեանը պաշտպանող թէ՛ դրամօժիտի իրենց դժուարին հարցով՝ աղջիկները ծանր տաղտուկ մը կ'ըլլան ծնողքներու: Պատասխաններէն կը հրատարակենք առաջնութիւն չահող թիւ 1ը, որուն տէրը կը ստանայ գեղեցիկ գրիչ մը, — զոր ինքնաբերաբար կը նուիրէ Սուլթան-Համամ ծանօթ թղթավաճառ Երուսաղէ էֆ. Իսթիւճեան, — և ուրիշ մը:

Թիւ 1. — Ծնողքներ ինչո՞ւ չեն ուզեր աղջիկ ունենալ, գացէք ծնողքներէն հարցուցէք, և որովհետեւ ես ալ ծնող մըն եմ... պարապ խօսքերու, ըսեմ թէ ծնած աղջիկը եթէ գեղեցիկ ըլլայ ու այնպէս մեծնայ դարձեալ դժուար կը ծախուի (այքը չեւլայ դրամօժիտին), որովհետեւ սա Ս. Սարգիսին իսկ ամուսնութեանց հրապարակը քանպակեն ալ քուրդ է:

ԳՈՒՆՏՐԱՃԵԱՆ



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎ.Ք. ԱՐՄԷՆ

55ՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 14

24 ՓԵՏՐՎԱՐ 1907

Վ Ռ Ա Մ

Շիքութիւնը տեղ մը չիկայ Վռամին: Անա'նկ մը կը հագուի, անա'նկ մը կը պաճուճուի գլուխէն մինչեւ ոտքը որ՝ տեսնողը զինքը լուռ պիտի կարծէր: Կօշիկը նոր է շարունակ Վռամին, տափառը արդուկին կնիքովը ժպտուն մազերը յարգարուած են խնամքով ու գլա-
կին տակէն իւղի վառքով մը կը փալփալան սանտրին վերջին փայփա-
յանքին դրոշմով: ու պետերուն երկու ծայրերը՝ միօրինակ գալարով՝
անայլայլ կը ցցուին բերնին եզերքներն ի վեր. ո՛չ իսկ հովին հպանցքը
կամ թաղկինակին համրոյրը կ'աւրչտէ զանոնք. այնչափ հոգածու և
համբերատար ջանքով ձեռի դրուած են: Հագուստները դերձակէն նոր
բերուածի դրոշմը կը կրեն միշտ, արդու կին գիծերը վրանին, ծայրերնին
չիտակ, վերջին նորաձեւութեան համեմատ խնամոտ կոճկուած: Վռամ
քալուածք մը ունի, հանդարտաբարոյ, նազելի, անտարբեր, անայլայլ
քալուածք մը, որ իրեն կուտայ հովը քանի մը վաճառատուններու
տէր հասառուի մը: Չաճապարեր, իրր թէ անգին՝ գործին զլուխը իրեն
համար աշխատող բաղմաթիւ պաշտօնեաներ ունենար՝ որոնք պէտք
չձգէին իր ներկայութեան: Փողոցներէն անցած ատեն՝ հետաքրքիր
ակնարկներ իր քայլերուն կը հետեւին, չափչփելով զինքը գլուխէն
մինչեւ ոտքը, և զարմացական ու ապշահար դիմադժութիւնով ինք-

զինքնուն հարցնելով թէ՛ եթէ իրենց ճանչցած անգործ Վռամն է այդ տղան՝ ուրկէ՞ այդ պերճանքը, չքեղութիւնը և հասառուի ջոջութիւնը։ Ամէն մարդ գիտէ թէ անգործ է Վռամ, թէ պարսպ կը պտտի առտունէ մինչեւ իրիկուն, թէ պէտ առանկ ձեւացնելով որ՝ բազմադրադ վիճակի մէջ է, և քանի մը գործը մէկէն կ'ընէ, անծանօթ վաճառատուններու մէջ, որոնց ի՛նչ և ո՛ւր ըլլալը չյայտնիր սակայն։ Ատանկ հաւտացնելու համար, ամէն օր պարսպ երթեւեկ մը կ'ընէ տունէն դէպի անանուն ծակածուկեր, միշտ զբաղումի վրայ ձեւացնելով ինքզինքը, և հանդիպողին խօսելով աս ու ան առեւտրական գործին վրայ, հսկայական մեծարանութիւններով, իբր թէ անոնց մէջ կարեւոր մասնակցութիւն մը ունենար։ Գիտէ ամէն մարդ նաեւ թէ ծնողք ու ազգական չունի Վռամ, որպէսզի վայելէր անոնց պաշտպանութիւնը, և ա՛յդ միջոցով կարենար մեկնելի դարձնել իր լիառատ ծախքերուն գաղտնիքը։ Միակ մօրաքոյրն ալ՝ որուն տունը կը գիշերէ՝ ինք կարօտ է ուրիշ օգնող ձեռքի մը։ Ուրկէ՞ և ի՞նչպէս ուրեմն՝ Վռամի ցուցասէր պերճանքը և շաւղութիւնները՝ որոնց հաղիւ խոշորկէկ գումար մը կը բաւէ ամսէ-ամիս. — խորհրդասքօղ գաղտնիք՝ որուն մեկնութիւնը անհնար է շատերու միտքին։ Եւ ինչպէս թափանցէին այդ գաղտնիքին և մերկայնէին զայն քօղարկող վարագոյրէն, երբ Վռամ չբաւականանար լոկ իր հազւաստ-կապուստի, ուտեստի շաւղանքէն, այլ նաեւ ձեռք կը զարնէ բախտը փորձելու պէս վտանգայի արկածախնդրութիւններու, որոնց մէջ զգուշաւոր ու խոհեմ վարանումներէ չկասիր երբեք՝ մինչեւ մեծ յանդգնութիւններու և արկածալի խոյանքներու խիզախելու չափ։ Կը խաղայ, կը կորսնցնէ, ափով դրամ կը վառնէ և սակայն հոգը չէ, չի քաշուիր խաղէն, նորէ՛ն կը մտնէ, կը խաղայ խաղերուն ամէն տեսակը։ Կիրակի օրերը իրեն ընկեցակիցներու սրճարանն է Վռամ անպատճառ, ուր գնդամուղ կը խաղան, և որուն մէջ նշանակելի հռչակ մը ունի ինք։ Իր մօտքը ու ներկայութիւնը տեսակ մը երկիւղած պատկառանքով կ'ողջունուի, և երբ Վռամն է որ կ'անցնի խաղին գլուխը, զմայլուն ուշադրութիւնով կը հետեւին իր դարձուածքներուն, իր խաղացուածքին, իր ճարտարութիւններուն, իր ընելիք անակնկալներուն։ Կը շահի, կը կորսնցնէ ալ, բայց փոյթը չէ, նորէն խաղին մէջն է, կէս-օրէն մինչեւ իրիկուն, ամբողջ կիրակին, երբեմն չաբթու մէջ իրիկուններն ալ։ Եւ Վռամի գրպանը լեցուն է միշտ, դրամը իր շառաչը լսելի կ'ընէ հոն, շա՛րունակ անպակաս, խառն ի խառն, մետաղին տեսակներովը, ոսկի, արծաթ, մեծ, պղտիկ, ամէ՛ն տեսակը։ Անճառելի փառքով մը կը խառնէ տափառի գրպանը Վռամ, շաշեցնելով հնչելու ձայնը անսպառ արծաթներուն, որոնց ուրկէ գալուն խելք չեն կրնար հասցնել իր կեանքին ականատեսները։ Շատեր իրարու ականջէ մեկնութիւններ կը փափսան, չարամիտ ականարկութիւններ

կ'ընեն մէջերնին, կը հրճուին Վառլի գաղտնիքը լուծած ըլլալու հաճոյքով, բայց միշտ վարանոտ տարակոյտ մը կը կասեցնէ զիրենք խիզճի հանդարտութիւնով վերջին վճիռը արձակելու: Ոմանք այդ գաղտնիքին հանգուցը կը գտնեն ներկայութեանը մէջ այն տարեց մարդուկին, որ շարունակ կ'ընկերանայ Վառլի, սրճարանները և երրեմն ալ դուրսը, և որուն հետ ծայրայեղ մտերմութիւն մը և սրտակցութիւն մը ունենալ կ'երեւայ: Կարմրայտ, գիրուկ, խոշոր, արխնոտ, դուրս ցցուած աչքերով, թանձր ու զանգուածաւոր մարմինով, հաստ չրթունքներով ու մանդայտերով վաւաչոտ մարդուկ մըն է ադ, յայտնի հպարտանքովը հարուստ կենցաղաւէրի մը, որ հաճոյքներու, կեանքի վայելքներու յղիանքին նուիրուած երեւոյթ մը կը մատնէ: Վառլի կրկին տարիքը ունի, և «Միւսիւ» տիտղոսով կը կոչեն զայն՝ ձանչցողներ: Ան մեծ երանութիւն կը զգայ իր քովը ներկայութենէն ու ընկերակցութենէն ինչպէս Վառլի, որուն աչքերուն մէջ կը մխրճէ ակնարկը յայրատ ու անյագ նայուածքով, նոյնպէս միւս բոլոր խաղակից պատանիներուն՝ որոնք սրճարանը կը լեցնեն, և որոնց դնդամուղի սեղանին շուրջը անցուղարձի, ոստոստումներու և մարմնաթեքութեան բոլոր շարժումներուն կը հետեւի նստած տեղէն, հեշտազուարճ երանութիւնով և անսահման արքշաւանքով: Վայելուչ դիմագծութիւններ ունի Վառլ, ժպտուն ու թարմ գէմք մը, և կանացի փափուկ մորթ մը կը վարդագունէ իր միսը, սիրազբաւ հրապոյր մը տալով իր վայելագեղ մարմինին՝ որ ամէն բարեձեւութիւն ու շնորհալիութիւն կը մարմնացնէ: Վառլի տեսքոտ երիտասարդի այդ հանգամանքովն է որ կը մեկնուի քիչ մը թէ՛ ինչո՞ւ իր շուքին պէս իրեն ընկերացող անհաճոյ երեւոյթով այդ մարդուկը հաճոյք կը զգայ իր ընկերակցութենէն, ոչ միայն չրաժնուելով անոր քովէն, այլ չխաղացած միջոցին զայն քովը նստեցնելով, շատ մօտը, գրեթէ ծունկ-ծունկի, ատեն-ատեն ձեռքը ձեռքին մէջ առնելով և ակնարկը ցանկատէր վաւաչոտութեամբ պտտցնելով անոր դէմքին ու մարմինին ամէն կողմը: Վառլ չնեղուիր իր ընկերակիցին այդ կասկածելի վարմունքէն, ինքնատեղծ խիզճի հանդարտութիւնով մը թէ՛ իր չուրջիները չեն թափանցեր գաղտնիքին իրենց սրտակցութեան, ինչպէս ամէնէն անպատիւ կիներ իսկ՝ իր հոմանին թեւ պտտացուցած ատեն՝ չլրդուիր հանրային դատաստանին դատապարտութենէն, ինքնատիտի հաւատքով թէ՛ ոչ ոք կը կռահէ անպատիւ ընոյթը իրենց ապօրէն յարաբերութեան: Վառլ չփոտտանջուիր նաև կասկածէն թէ՛ իր անգործ վիճակովը ափով դրամ վատնելուն մեկնութիւնը կրնան չուրջիները գտնել շուտով, այդ գաղտնիքը փնտռելով սիրախանդ ներկայութեան խորհուրդին մէջ իր հարուստ ու աւատաձեռն բարեկամին, որ ինքզինքը կը ցուցնէ ամէն անգամ, դրամ խաղցնելով ուրիշ պատանիներու յաջողութեանը համար և անոնց թէյ, սուրճ ու կլկակ հրամցնելով անխնայ:

Ինչ որ ալ ըլլայ հաւատքը Վառմի՝ շուրջիններուն իր մասին կազմած դատաստանին վրայ, ան չլրգովի կրբեք ո՛չ մէկ խղճահարուածինէ ու ամօթէ, և պարզերես ու ճակատարաց՝ կը ներկայանայ ամէն ընկերութեան մէջ, գրպանը լեցնող դրամին իրեն պարգեւած հաճոյքներուն ու վարած ջոջ կեանքին պերճանքովը արբչիւ։ Ո՛չ մէկ քմահաճոյքէ, ո՛չ մէկ վայելքէ ետ կը մնայ իր վարած կեանքով։ Ղրամը անպակաս է գրպանէն, և հացկատակներու հոյլ մը կը թռչտի իր շուրջը։

Այս նկատումները բաւած են իրեն որ՝ սնտարբեր մնայ ան ամօթի ամէն զգացումի և հանրային դատաստանի խղճահարութեան, միարձեւ լու համար շոշոյողուն արտաքինով բայց պիղծ ու գարշելի ներքինով, ապականած բարոյականով այն կեանքին մէջ, զոր կ'ապրի։ Անոր մէջ, հոգիին սպանութեան անտարբեր ականատես, և կոխոտած՝ բարոյականի, մարդկայնութեան և առնականութեան ամէն զգացում, ան կ'ապրի անձին, հոգիին, եսին վաճառումովը լրբօրէն վաստկուած պերճանքի կեանքը, տեսքոտ ու չլացուցիչ երեւութապէս, բայց նեխած, գարշ, պիղծ ու ապականած ներքնապէս։ Եսի ձայնին սպանութեան այդ անպատկառ լրբութեամբ է որ՝ ան կ'ընկերանայ կիրակիները իր բարեկամին անխոստովանելի տեղուանք, ուրկէ կը դառնայ աղօտ աչքերով, կ'իծառ քայլերով, նիհարցած և մարմինէն ու գեղէն միշտ բա՛ն մը վրայ տուած, աղջկան դերակատարութեան մը լլկումէն ետքը այդ հոգեպիղծ մարդուն քով։ Ու կ'օրօրուի ալ այն միամիտ երազով թէ՛ ոչինչ կը հասկնան իր կեանքին գաղտնիքէն։

* *

Վառմի հիւանդութիւնը լոկ իրեն յատուկ ախտ մը չէ՛։ Անով վարակուած բազմաթիւներ կան մեր երիտասարդներուն մէջ. և այդ համաճարակը կը սպառնայ ուրիշներու ալ, որոնք՝ վտանգէն կարթուած զոհեր՝ անդունդին եզերքը կը դեգերին, քայլամուր որ ուտածիր, անկումի վիճին մէջ կորսուելու ենթակայ։ Ուրկէ՞ տարածուեր է միքորով ականար հոգիներու Բարոյականը կրծող այս աղետալի ախտին, որ կորսուած զոհեր կ'առնէ կը տանի անկումի գերեզմանը, եւ ո՞վ պիտի ըլլայ անոր բժիշկը, որ կործանարար այդ համաճարակին դարմանին խորհի և մեր պատանի սերունդին մէկ մասին կրակներուն մէջ ներարկուիլ սկսած թունաւոր արիւնը մաքրէ։

ԵՆՈՎԻՔ ԱՐՄԷՆ

ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

«ԱՇՈՒՂ»Ը, Յ. ԶԻՆՃԻՐՃԵԱՆ, ՅԱԿՈԲ ՈՍԿԱՆ

Գ.

Յակոբ Ոսկանի հետ՝ Տէրոյենցի հակառակորդ մըն ալ աւելցաւ գրատան մէջ : Ոսկի վարժապետն ալ կ'ատէր Չամուռնին, թերեւս ոչ այնքան անոր անդրադառնականութեան՝ որքան իրեն սիրելի կարգ մը երախտաւոր անձերու գուրը փորած ըլլալուն համար : Շատ հաւանական է որ այդ հակառակութեան գլխաւոր թելադիրը եղած էր նոյն ինքն կարապետ վարդապետ Շահնազարեան, զոր (18)1ին՝ Տէրոյենցի ամբաստանութեանց վրայ՝ ճշմարտապէս հաւատաքննական դատաստանի մը ենթարկած էին ժամանակին մոլեռանդ ամիրաներն ու ոչ նուազ մոլեռանդ եկեղեցականները՝ իրենց գլուխ ունենալով Պոլսոյ նախկին Պատրիարք մը՝ Մատթէոս արքեպիսկոպոս Զուխաճեան, վերջէն կաթողիկոս :

Ոսկան՝ մտերմութիւնը վայելած էր այդ երախտաւոր վարդապետին, և անսահման հիացում ցոյց կուտար անոր նկատմամբ :

— Կրօնքը, կ'ըսէր, առանձինն առնելով էական պէտք մըն է մարդու համար, բայց նոյնքան էական է նաեւ ուսմունքը. հետեւաբար՝ այս երկուքը պէտք է ձեռք ձեռքի տան, իրարու փարին և այնպէս տարածեն իրենց բարիքը. ոչ առաջինը պէտք է արգելք ըլլայ վերջինին տարածման, ոչ ալ վերջինը առաջինին :

Եւ եթէ կը սիրէր ու կը յարգէր Շահնազարեան վարդապետը, պատճառը սա էր որ ան այդ երկու տարրերը հաւասար գուրգուրանքով զարգացնելու, և հաւասարապէս բարերար դարձնելու աշխատած էր իր ուսուցչական, հրատարակչական և խմբագրական բոլոր ձեռնարկներուն մէջ, նոյն իսկ երբեմն «անհաւատ» հռչակուելու անպատեհութիւնը աչք առնելով :

Տէրոյենցի կեանքին մեծագոյն արտաքին ահա այդ կարգի բարեփոխ ձեռնարկներու դէմ բռնած խափանարար ու քինախնդիր ընթացքն է, և Ոսկան ալ այդ տեսակէտով զայն կ'ատէր : Անկէ անդին, հիացմամբ կը գովէր Պրուսացի պատուելիին «ծովածաւալ» հմտութիւնը և անօրինակ աշխատասիրութիւնը, ինչ որ դիւր չէր դարձիր Ջինճիրճեանի : Անոնք շատ հեղ վէճի կը բռնուէին պատուելիին համար, և որովհետեւ չէին կրնար իրար համոզել, բանակուիւր կ'երկարէր սնվերջ, ժամեր կը տեւէր, յաճախ նոյն իսկ շարունակելի կը մնար և ուրիշ օր մը կրկին ձեռք կ'առնուէր միեւնոյն կրքով ու մոլեգնութեամբ :

Անգամ մը՝ երկու դպրոցականներ ներկայացան գրատուն, և ֆրանսերէն գրքերու լաւագոյն հայերէն թարգմանութիւնները խնդրեցին :

— Ի՞նչ պիտի ընէք, հարցուց Ջինճիրճեան :

— Ֆրանսերէնէ հայերէն թարգմանութեան ընտելանալ կ'ուզենք, պատասխանեց տղոցմէն մէկը:

Ոսկան՝ որ մեկնելու կը պատրաստուէր՝

— Տէրոյնցի «Բասքալայ Խորհրդածութիւնք»ը առէք, ըսաւ, թէ՛ գործը լաւ է և թէ՛ թարգմանութիւնը:

Այդքանը շատ իսկ էր Զինճիրճեանը կատղեցնելու համար: Կը յիշեմ որ աղաները կճրտեցուց, և պատրաստուեցաւ բերանը բանալու, բայց Ոսկան արգէն իսկ «մնաք բարով»ը ըսած ու դուրս ելած էր:

Աւելորդ է ըսել թէ դպրոցականները չկրցան «Բասքալայ Խորհրդածութիւնք»ը ստանալ:

Միջադէպը անարձագանք չպիտի մնար: Որովհետեւ՝ Զինճիրճեան չմոռցաւ խնդիրը, և երկու երեք օր վերջ՝ երբ Ոսկան կրկին գրատուն հանդիպեցաւ, իսկոյն յուզեց զայն, ըսելով.

— Ոսկա՛ն էֆէնտի, սա առջի օրուան ըսածդ միտքդ է... գիրք չգտար՝ ելար «Բասքալայ Խորհրդածութիւնք»ը յանձնարարարեցիր տղոց...

— Ի՞նչ ունի որ, պատուական գիրք է...

— Կ'երեւայ թէ Վօլթէռի գնահատութիւնը չես կարդացեր... մէյ մըն ալ անո՞ր հարցուր...

— Ինչպէ՞ս չեմ կարդացեր, աւելի ըլլալով՝ Շաթօպրիանի մէկ յառաջաբանն ալ կարդացած եմ... երբոր, կ'ըսէ, Բասքալի «Խորհրդածութիւններ»ուն կցուած գնահատութիւնները կը կարգամ՝ Եդիպոտի Փարաւոններուն հոյակերտ բուրգերուն տակը՝ Ֆէլլահ գեղջուկներուն բարձրացուցած վրանը միտքս կ'իյնայ... և այդ գնահատութիւնները Վօլթէռինն են...

— Խնդիրը ատոր վրայ չէ... Տէրոյնցի թարգմանութիւնը լաւագոյնն է ըսիր... բայց այդ ապաշնորհը խարդախած է Բասքալի գործը...

— Շատ աղէկ, թէեւ չեմ կարծեր, բայց ի՞նչ գիրք պիտի տայիք այս տղոց ձեռքը...

— «Արբա Քօնսթանթին»ը պիտի տայի՝ եթէ այն օրը պատրաստ գտնուէր... տղաքը բաղդ չունէին... երէկ՝ երկու հատ մէկէն ելաւ նոր գնուած գրքերու մէջէն...

Օրիորդ Եւփիմէ Օտեանի գեղեցիկ թարգմանութեան այդ երկու օրինակներէն մէկը պիտի վիճակէր այս օրուան մեր գրողներէն մէկուն, — այն ատեն դպրոցական, — որ նոյն պահուն ներս մտաւ Տօտէի «Ճէք»ը խնդրելու: Բնագաշտ վիպասանին գործը իբր թերթօն թարգմանուած էր տեղական թերթի մը մէջ, և ինք ալ ֆրանսերէնէ-հայերէն թարգմանութեան վարժուելու համար՝ ֆրանսերէն բնագիրը կը վնասէր: Դործը լաւ էր, բայց թարգմանութեան հարազատութիւնն ու գեղեց-

ութիւնը կասկածելի Չինճիրճեան՝ «Արբա Քօնսթանթին»ը յանձնարարեց ,
 և յաղթական ակնարկով մը խայթեց Ոսկանը՝ հրը դեռատի յաճախորդը
 իր յանձնարարութեան համեմատ՝ Հալէվի գլուխ-դորձոցը գնելով մեկ-
 նեցաւ :

* * *

Ապրած մարդ էր Ոսկան , չա՛տ հետաքրքրական ու զուարճալի
 մանրավէպեր գիտէր իրեն ժամանակակից անձնաւորութեանց մասին ,
 կը պատմէր ա՛յն աստիճան սիրուն ու գրաւիչ եղանակով՝ որ կախ կը
 մնայինք իր շրթունքներէն :

Մեծ մասամբ միտքս կ'իյնան այս պահուս , և անոնց հետ քանի՛
 քանի հին մարդիկ՝ իրենց բնաւորութեան ու կեանքին ամէնէն կար-
 կառուն կողմերով՝ կուգան երեւակայութեանս կը բաղխին :

Ահա իմագիւղի Տէր Երեմիան , — «Օրացոյցճի»ն , — ալեւիաւ և պատ-
 կառելի ծերունի՝ զոր Ներսէս Պատրիարք յոտընկայս կ'ընդունի ու կը
 պատուէ եղեր , ժամանակաւ իրեն ուսուցչութիւն ըրած ըլլալուն հա-
 մար : Այդ քահանայն՝ ինչպէս յայտնի է՝ բաւական ատեն Օրացոյցի հրա-
 տարակութիւնը մօմօքօզ դարձուցած է , և կամ աւելի ճիշդը՝ Օրացոյցի
 շահագործումը իրեն յատկացուցած են իւր կենսաթոշակ , որովհետեւ
 ճշմարիտ երախտաւոր մը եղած է : Բայց ծակաչքներ չա՛տ... : Այդքան
 մը փոխարինութիւն մեծ բան կ'երեւայ իր ատենի մարդոց , մասնաւո-
 ըրար հրատարակիչներու աչքին : Պաղտասարեան , Ճանիկ Արամեան և
 ուրիշներ , չեն ուզեր Օրացոյցի հրատարակութեան առանձնաշնորհումը
 Տէր Երեմիայի թողուլ , և ահա հրապարակը կ'ողողուի բազմաթիւ Օրա-
 ցոյցներով : Տէր Երեմիա կը բողոքէ , Պատրիարքարանը կ'ուզէ միջա-
 մտել , բայց հրատարակիչները իրաւունքի տեսակէտ մը կը յուզեն ու
 տեղի չեն տար : Երկա՛ր կը տեսէ այս խնդիրը , մինչեւ որ Պատրիար-
 քարանը՝ ճարահատ՝ կը ստիպուի Պաշտօնական Զեկոյց մը հրատարա-
 կելով յայտարարել թէ ամէն մարդ ազատ է Օրացոյց պատրաստելու ,
 պայմանաւ որ նախապէս կրօնական ժողովոյ քննութեան ենթարկէ :

Տեսակէտով մը այդ անօրինութիւնը բարեբաղդութիւն մը կ'ըլլայ
 խեղճ տէրտէրին համար , որովհետեւ՝ անկէ առաջ ամէնուն աչքը իր
 վրայ կը մնար , և ձախողւածի մը հանդիպողը չէր վարաներ մրմռա-
 լու .

— Աշխարհ գալէն ետքը՝ չիտակը Տէր Երեմիա ըլլալու է... ամէ-
 նուն գիտցած բաները ծախելով ստակ կը դիզէ...

Դոնէ միայն այս մուտուքներով բաւականանային : Շատ անգամ՝
 չարածճիւներ զուարճալի խաղեր կը սարքէին , և անեւ ու ծիծաղելի
 կացութեանց կը մասնէին այդ պարզամիտ մարդը որ սակայն ոչ մէկուն
 գէշութիւն ըրած էր :

Այսպէս՝ օր մը՝ իրեն անձանօթ ստորագրութեամբ նամակ մը կ'ընդունի, չոր ու հակիրճ երկրորդ մը որ սակայն կատարեալ ապշութեան կը մատնէ զինքը։ Նամակագիրը՝ իրեն կը ծանուցանէ թէ հրատարակած Օրացոյցներուն մէջ մուցած է յիշատակել նաև Բագոսենտիանոս անուն սուրբ մը՝ որ Բարեկենդանի կիրակին կը տօնուի, և որուն մուգումը կրնայ ծանր պատասխանատուութեան ենթարկել զինքը։ Տէր Երեմիա կը չիօթի կը մնայ։ Այնքան տարիներէ ի վեր Օրացոյց կը պատրաստէ, սուրբերու և երանելիներու անունը կը յիշատակէ, բայց ատանկ սուրբ մը... տարօրինակ չէ՞ որ դեռ նոր կը լսէ։

— Բագոսենտիանոս, Բագոսենտիանոս, ո՞ր սատանի ծակէն ելաւ այս Բագոսենտիանոսը, կը մուտայ, և մօրուքը ձեռքը առնելով կը սկսի խոկալ ու խոկալ։

Չուր ջանք սակայն... Յիշողութիւնը ոչինչ կը յայտնէ իրեն այդ անձանօթ երանելին նկատմամբ։ Այն ատեն՝ խեղճ մարդը կը դիմէ «Վարք Հարանց»ին ու «Յայսմաւուրք»ին, կը թղթատէ զանոնք ուշադրութեամբ՝ յաճախ ամբողջ էջեր կը քաղէ քրիստոսական համբերութեամբ մը, բայց կրկին չի կրնար սուրբ Բագոսենտիանոսի հետքը գտնել։

— Թօհաֆ բան, շիտակը թօհաֆ բան...

Տեսակ մը ունակութիւն կը դառնայ իրեն այդ բացառանշութիւնը, և քանի մը օրեր յաջորդաբար՝ ծանօթի մը հանդիպած ատեն՝ չի կրնար զսպել հարցում մը որ կարծես բռնաբար չրթունքէն դուրս կը խուսի։

— Ի՞նչ կ'ըսես, Թօհաֆ չէ՞...

Մարդիկը՝ բնականաբար բան մը չեն հասկնար, և իրենց կարգին կը հարցնեն.

— Ի՞նչը թօհաֆ է, Տէր Հայր։

— Հի՛չ, հի՛չ, թօհաֆ չէ՛ թօհաֆ չէ՛, կը յարէ անմիջապէս, ու կը հեռանայ արտորնօք, որովհետեւ չուղեր իր ծանօթներուն հասկցնել թէ ինք այդքան տարուսն Տէր Երեմիա մը ըլլալով, տակաւին սուրբ Բագոսենտիանոսի գոյութենէն տեղեկութիւն չունի։

Իրիկուն մը՝ բաղդը անանկ կը բերէ որ այդ միւլենոյն անգլիտակից հարցումը ընէ նաև Չուխանեան Կարապետ պատուելիին։ Պատուելին՝ խուլ ըլլալով՝ չի լսեր, ու փոխադարձաբար կը հարցնէ.

— Ի՞նչ կ'ըսես, Տէ՛ր Երեմիա։

Բայց Տէր Երեմիա արդէն իսկ ինքզինքին եկած է։

— Հի՛չ, բարեւ կուտայի, կ'ըսէ, ու կը հեռանայ աճապարանքով։

Հինգ վեց քայլ անդին սակայն, կը կենայ ու կը սկսի խորհիլ։ Չուխանեան բանգէտ ու բարեկամ մարդ է, անոր կրնայ վստահիլ իր գաղտնիքը՝ զոր ոչ մէկուն յայտնած էր, վախնալով որ անպատեհութիւն մը կը ծագի և դործը Կրօնական Ժողովին կ'ընայ։

— Պատուելի՛, պատուելի՛, կը ձայնէ ետ դառնալով, Աստուծոյ սիրոյն՝ քեզի բան մը հարցնեմ, մարդու չյայտնես :

— Խե՛ր է, ի՞նչ է որ...

— Ամա չիտա՛կ ըսէ, թօհա՞ֆ չէ՞... :

Պատուելին կը կարծէ թէ սխալ լսեց, և ձեռքովը ականջին շուրջը պահպանակ մը քաշելով՝ գլուխը կը խոնարհեցնէ Տէր Հօր դէմքին վրայ ու կ'ըսէ .

— Բա՛րձր խօսէ, Տէր Երեմիա՛, ի՞նչ կ'ըսես...

— Աստուածդ սիրես, սուրբ Բագոսենտիանոսը կը ճանչնա՞ս...

Չուխաճեան՝ կը շտկուի, և զարմացմամբ իր խօսակիցը կը գիտէ :

— Թօհա՞ֆ չէ՞ կը հարցնէ Տէր Երեմիա :

— Իրա՛ւ որ թօհա՞ֆ է... ինչպէ՞ս ըսիր... սուրբ... սուրբ... սուրբ ի՞նչ էր...

— Բագոսենտիանոս... պէլքի լսած ես...

Պատուելին կը մտածէ կը մտածէ՝ չի կրնար մտաբերել :

— Տէ՛ր Երեմիա, կ'ըսէ ի վերջոյ, չիտակը կ'ուզե՞ս, ատանկ անուն նոր կը լսեմ... իրաւ որ թօհա՞ֆ անուն է...

— Թօհա՞ֆ է, եա՞...

— Ուրտեղէ՞ն գտար...

Տէր հայրը կը տոբալուի նամակին պատմութիւնը ընել, և անգամ մըն ալ կը հարցնէ խօսակցին թէ բնաւ չէ՞ հանդիպած այդ անունով սուրբի մը յիշատակութեան :

Չուխաճեան նորէն կը սկսի խորհիլ .

— Բագոսենտիանոս, Բագոսենտիանոս... թօհա՞ֆ... Տէ՛ր Երեմիա, սխալ կարդացած չըլլա՞ս...

— Չէ՛, պատուելի՛, ի՞նչ կ'ըսես, նա՛, դուն ալ առ կարդայ :

Եւ գրպանէն նամակը հանելով Չուխաճեանի կը յանձնէ :

Պատուելին կը կարդայ, պահ մը յօնքերը կը պռոտէ, յետոյ յանկարծ ուրախութեան կանչ մը կ'արձակէ : Առեղծուածը պարզուած է :

— Տէ՛ր Երեմիա, հետդ եղի՛նք եղեր են, կ'ըսէ խնդալով :

— Էղի՛նք մի եղեր են...

— Հապա՞... նամակին յետ գրութենէ՞ն ալ չարթնցար :

— Ի՞նչ յետ գրութիւն...

— Նա՛, նայէ...

— Մեղա՛յ Տէր Աստուած, կը մնջէ Տէր Երեմիա՝ իսկապէս նամակին ստորագրութեան տակ գտնելով յետ գրութիւն մը՝ զոր առաջին անգամ՝ իր շիտակութեան պատճառաւ՝ չէր տեսած :

Նամակագիրը այդ մէկ երկու տողին մէջ կը յանձնարարէր իրեն որ «աւելի մանրամասն տեղեկութեան համար՝ Սուրբ Բագոսենտիանոսի աւագ քրմապետ սուրբ Օգոստինտիանոսին դիմէ» : Յանձնարարութիւն մը՝

ուրկէ խեղճ մարդը ոչինչ կը հասկնայ, և զարմացմամբ կը հարցնէ Չուխաճեանի :

— Ի՞նչ ըսել է աս, պատուելի, ես ի՞նչ դիտեմ թէ Սուրբ Օգոստինոսի տաճարը երկիրքին ո՞ր պուճախն է... առանկ բան կը գրուի... Ինտո՞ր հարցնեմ...

Պատուելին կը խնդայ կոկորդալիբ :

— Օյի՛ն է, օյի՛ն, Տէ՛ր Երեմիա, կ'ըսէ անոր ուսը ծեծելով, սուրբ Օգոստինոսի տաճարը ըսածը գտնելու համար մինչեւ երկինք ելլելու պէտք չկայ... Վազ առտու կանուխ Պօլիս՝ Եռսուֆեան խան իջիր, այնտեղ կը գտնես...

— Սուրբ Օգոստինոսը...

— Չէ՛, Խոճասարեան Օգոստին, Օրագիրին խմբագիրը.

Տէր Երեմիա զարմանքէ զարմանք կը գլորի, ոչ իսկ բառ մը կրնայ արտաբերել :

— Տախա չհասկցա՞ր, կը յարէ Չուխաճեան, մեր Օգոստին էֆէնտին՝ միւս խմբագիրներէն մեծ մասին պէս՝ քիչ մը շատ կը սիրէ Այվալըխի ճիւղը... աս Բագոսնտիտանոս ըսածն ալ՝ գինովներուն չաստուածն է, Բագոսը... տեսա՞ր որ էյիկնմիշ եղեր են քեզի հետ...

«Օրացոյցճի»ն կը քարանայ :

— Հէ՛յ շուտի՛ կը տանի անիծից արմատները, կը գոռայ սրանեղու թեամբ, և առանց իսկ պատուելիին «մնաս բարով» ըսելու կը հեռանայ կ'երթայ :

* *

Ուրիշ անգամ մը, քանի մը սատանորդիներ բաւական կը տաքցնեն գլուխնին, և խօսք մէկ ընելով կը դիմեն Տէր Երեմիայի տունը : Այնտեղ՝ իրենցմէ մէկը ցոյց կուտան Տէր Հօր, ու միաբերան կ'աղաղակեն.

— Աստուծոյ սիրոյն, Տէր պապա, խօսք հասկցուր սա Մերկերին...

— Խեր է, օրհնա՛ծներ, կը ձայնէ Տէր Երեմիա, ի՞նչ կայ որ :

— Ի՞նչ պիտի ըլլայ, քանի սահաք է թեպէրաշ եղեր ենք գլուխը, աղուոր բան մը գիտէ, չըսեր...

— Ինչո՞ւ չպիտի ըսեմ, կ'ընդմիջէ Մերկեր, մէճիտիյէն ցնծացէք՝ մասունք զկայ որ պիտի չիլի կորիմ...

Եւ ահա պզտիկ հալածառութիւն մը կը ծագի այդ անկոչ հիւրերուն միջեւ. նոյն իսկ ծանր խօսքեր կ'ընեն, իրար կը հրմշտկեն, և Տէր Երեմիա հաղիւ թէ կը յաջողի զանոնք խաղաղեցնել :

— Ծօ օրհնա՛ծներ, ծօ հեղե մէյ մը նստեցէք նայիմ... գիտցածը ինչ է որ...

— Կեցիր որ պատմեմ, Տէր Պապա՛... նստեր կը խմէինք՝ մէյ մըն ալ ըսաւ քի աշխարհքին մէկ ճօթէն մէկալ ճօթը քանի՛ սահաքէն երթցուիլը գիտէ...

Տէր Երեմիա ականջները կը սրէ : Այդ կարգի խնդիրներ չերջին ծայր կը հետաքրքրէին զինքը :

— Ծօ ո՞վ գիտէ կոր ատիկա , կը հարցնէ փութով :

— Իշտե՛ Մերկերը... հարցուցինք քանի՛ սահաքէն երթցուիլը՝ չըսաւ... մենք ալ ատիկա Տէր Երեմիան գիտնալու է , ինչո՞ւ կը պահես՝ ըսինք , եկանք հոս... դուն չե՞ս գիտեր Տէր Պապա՛ :

— Ուրկէ՛ գիտնամ , օրհնա՛ծ... եթէ գիտնայի՝ ոսկի կը կտարէի...

— Տեսա՞ք մի , Վրայ կուտայ Մերկեր յաղթական շեշտով մը , ես նորէն ինսափղընա մէծիտիյէ մը կ'ուզեմ կոր... հէմ ըսելիքս մեծ բան է , մարդ չգիտեր , ճեճէս եմ իմացեր...

Տէր Երեմիա մօրուքը ձեռք կ'առնէ : Այդ աստիճան հետաքրքրական հարցի մը ծանօթութիւնը պզտիկ բան չէ , և յառաջիկայ Օրացոյցի մը փոխ կրնայ դառնալ :

— Ինծի նայէ՛ , կ'ըսէ Մերկերին , ես մէծիտիյէն կու տամ ամա՛ էյեհր , իրաւ է նէ...

— Մասունք լկայ , Տէր պապա՛... ամա մարդու բան չպիտի ըսես...

Տէր Հայրը մէծիտը կը ցնծայ և ականջը կը մօտեցնէ Մերկերին :

— Ըսէ , օրհնա՛ծ...

— Աշխարհիս մէկ ճօթէն մէկալ ճօթը տասերկու սահաթ է :

— Իրա՛ւ կ'ըսես , կը ձայնէ «Օրացոյցճի»ն՝ ապշահար և ուշադիր :

— Տեսես ըսած է նէ...

— Է՛յ ատ ինտո՞ր կ'ըլլայ :

— Տէր Պապա , արեւը չե՞ս տեսներ , աշխարհքին մէկ ճօթէն կ'եւլէ , տասերկու սահաթէն մէկալ ճօթը կը հասնի...

— Ծօ իրա՛ւ... ծօ ասչափ տարուան Տէր Երեմիա էի չէի գիտեր որ աշխարհի մէկ ծայրէն...

Բայց Մերկեր թող չտար որ խօսի :

— Մ'ըստ , Տէր Պապա , մարդու բան չպիտի ըսէիր նէ...

— Է՛յ , քե՛ֆ աղէկ , չե՛մ ըսեր , չե՛մ ըսեր...

Եւ այդ տեղեկութիւնը ստանալուն ուրախ՝ ճամբու կը դնէ հիւրերը , որոնք շունչերնին նորէն գինեատուն կ'առնեն , Տէր հօր մէծիտը օղիի պառկեցնելու :

Նոյնքան պարզամիտ է եղեր նաև իր երիցուհին : Անզաւրդ ու անուս կին՝ խեղճը սա հաւատքը պահեր է թէ տարուան ընթացքին տեղի ունեցող մթնոլորտային փոփոխութիւնները Տէր Հօրը գործն են , թէ Օրացոյցին մէջ «ձիւնարեր հողմունք» գրած օրը խկապէս ձիւն կուգայ , թէ «անձրեւ» գրած ատենը կ'անձրեւէ և «պայծառ օդ» ըսած ատենն ալ արեւը հարսի պէս քօղքը կը բանայ :

Տարի մը՝ սոսկալի ձմեռ մը կ'ընէ Պոլսոյ մէջ , և ցուրտը ա՛յն աստի-

ճան զարհուրելի սաստկութեան մը կը հասնի որ երէցկիւնը չիտակ Տէր
Հօր վրայ կը վազէ :

— Գո՛ւզում Տէր Հայր, Աստծու սիրուն...

— Ի՞նչ է ան, իրիսկի՛ն, ի՞նչ ունիս, կը դռէ Տէր Երեմիա՝ շփոթած
ու այլայլած :

— Աստծու սիրուն, կալ տարի ասանկ ցուցանք ձմեռ մի գրիւր...
սա «ձիւնաբեր հողմունք» ին զարնուեր գացեր ես, չդճես նէ որո՞ւ
զարատը կը դպչի...

— Իրիսկի՛ն, ի՞նչ կ'ըսես...

— Ի՛նչ պիտի ըսեմ, Տէր Հայր, մէյ մը դուրսը նայէ, փռվիւրին
օխան ասօր նորէն փռոյսիշ ըրաւ, փախըր փոխարէն կրակ չունի որ
տաքնայ...

* *

Այս անուշիկ ասուլիսը կը քակուէր անընդհատ Եւքսէք Գալտըրըմի
այդ կրպակին մէջ, երբեմն Ոսկան կը խօսէր, երբեմն Զինճիրճեան, շատ
հեղ յաճախորդներն ալ կը մասնակցէին, ինչպէս նաեւ «Աշուղ»ը : Եւ
գրքերու առուտուրը կը շարունակուէր անխափան : Օր կ'ըլլար որ աւե-
լի գնելով իրիկուն կ'ընէին քան ծախելով : Զինճիրճեան՝ մասնաւոր
տկարութիւն մը ունէր հին տպագրութեանց մասին, և ամէն անգամ որ
կարեւոր գնում մը կ'ըլլար, ուրախութեամբ ձեռուընները կը շփէր՝
մրմնջելով :

Էս գրեան

Ազնիւ գինիւ,

Որքան հիւնաւ՝

Այնքան յարգի կը լինին :

Եւ ապահովաբար իրաւունք ունէր :

Կ'ուզէի վերջացնել, բայց ահա ուրիշ մանրավէպեր ալ միտքս կ'իյ-
նան, հին մարդոց հի՛ն բարքեր, երբեմն հրահանգիչ՝ բայց միշտ զուար-
ճալի :

Ուրեմն յաջորդով :

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ



Յ Ո Ր Ե Վ

Յորեկ, դշխոյ ամսառան, դաշին վրայ փռուած մունջ,
Ծածկոյթներու պէս արծաթ՝ շուրք երկինքէն կ'իջնէ վար:
Ամէն ինչ շուն: Փողփողի՛, հրդեհի օղը՝ անշունչ.
Հողը քմեր է համակ՝ պարեգօտի ճակ հրաւթառ:

Տարածութիւնն է անծայր, դաշտերուն վրայ շուրջ չիկայ:
Եւ ցամբած է այն աղբիւրն ուր խեղճ քիւր հօտեր.
Մուր, անորոշ սահմանով սա անսառն աչ հեռակայ՝
Կը լնանայ հոն անշարժ, հանգիստով մը ծանրաբեռ:

Լոկ մեծ, հասուն ցորեններն, ծովու մը պէս ոսկեհեր,
Այ չուզելով լնանայ՝ կը քաւաշին հոն հեռուն.
Նուխրական այն հողին խաղաղասէ՛ր որդիներ՝
Անոնք լամեն աներկի՛ւղ՝ ընկանակը արեւուն:

Հառաչի մը պէս իրենց հոգիներէն հրաւթառ
Իրենց միջեւ փափսացող ծոցէն ծանր հասկերուն՝
Սերք ծածանում մը ծրնի դանդաղածո՛ւշի, մեծափա՛ռ,
Ու կը մեռնի փոշիի հորիզոնին մէջ նեոն՝ւն:

Մօտք, պառկած խոտին մէջ, մերմակ ֆանի մը եզներ,
Լորձունք քափէն իրենց հաս ակունքներէն յամրաքար.
Եւ հեռէին նուաղուն, աջերով սեւ, անվեհեր,
Երազներու ծիրերուն որ երբեք չեն վերջանար:


Թէ ցորեկին անցնիս դուն հրաւթա՛ռ այդ դաշտերէ՛
Սիրքդ լեցուն հրձուակով կամ զառնութեամբ մը անյուր,
Փախի՛ր, բնութիւնն է պարսպ, եւ արեւը կ'սպառէ.
Ոչ ոք հոս է կենդանի, ոչ ոք զըւարք կամ զըխուր:

Բայց խնդաշին կամ լաշին՝ երբ յուսախար վերջապէս,
Մոռացումին ծարաւած՝ աղմկաշի աշխարհին,
Չի գիտնալով ա՛յ սիրել կամ անիծել, քէ կ'ուզես
Ընկել վայելի՛ն հեշտութեան մը գերագոյն, սրնագին,

Եկո՛ւր. ֆեզի կը խօսի արեւն լեզուով մեծափա՛ռ,
Ընկղմէ դուն անվախճան խո՛րն անողոք իր բոցին,
Եւ յեկագոյն արօտներն վերադարձի՛ր յամրաքար,
Սիրքդ քաթիած եօրն անգամ՝ ոչինչի՛ն մէջ երկնային:

ՆԻՉԵՒՆ ԶՈՅՐ

Զ. -



Սէրժ Բեթրովիչ աշխատասէր էր, բայց չէր սիրեր աշխատութիւնը, և կը տառապէր այդ բեռին տակ, որովհետեւ ան երբեք գոհ չէր թողած զինքը: Վարժարանին մէջ, իր գործն էր սորվիլ բաներ՝ որոնք չէին շահագորգուեր զինքը, որոնց հանդէպ անտարբեր էր, և որոնք նոյն իսկ հակառակ էին իր տրամաբանութեանը և խիղճին. ասոր համար՝ անոնք ա՛լ աւելի տաժանելի կը դարձնէին իր ուսումները: Համալսարանին մէջ, իր աշխատութիւնը աւելի՛ դուրին էր, աւելի՛ իմաստալից, բայց ան ալ չէր գոհացներ ցուրտ միտքը երիտասարդին, և այն դասերը զորս կուտար դպրոցի ուսանողներու, ուրիշ բան չէին բայց եթէ անդրադարձումները իր առած դասերուն. և անոնք ալ կը տաղտկացնէին զինքը: Եւ պաշտօնէութեան իր անպագայ աշխատութիւնը՝ իրեն կը պատճառէր նոյն թաղծոտ ու նուաստացուցիչ ձանձրոյթը: Միայն ամառը, Սմոլէնսքի մէջ, իր տունը, Սէրժ Բեթրովիչ կը հանգչէր, ու փայտէ հրացաններ կը շինէր իր պղտիկ եզրայրներուն, կը կարգադրէր պարտէզին նստարանները և ցանկերը, կը փրցնէր չոր տունկերը, կը փորէր ակօսաւոր ու արգաւանդ հողը փայլուն գործիքով մը: Եւ ատիկա հաճելի ու ոգեւորիչ աշխատութիւն մըն էր, բայց չէր ա՛ն՝ որուն զինքը սահմանած էին իր պաշտօնեայ տղու ծնունդը և դաստիարակութիւնը: Մարդիկ կան՝ որոնք կը տառապին անհաշտութենէն իրենց կարողութեան և պէտքին, կը խորատկեն պատուարները, կ'երթան ո՛ւր որ կ'ուզեն, և կ'ըլլան, հօտարած, գործուոր կամ թափառաշրջիկ. բայց այդ տեսակ զօրեղ ու յանդուգն մարդիկը քիչ են: Ինք, Սէրժ Բեթրովիչ, տկար, երկչոտ կը զգար ինքզինքը, կառավարուած օտար կամքէ մը, վայրաշարժի մը պէս, զոր աղէտ մը միայն կրնայ չեղեցնել այն գիծերէն՝ որոնց վրայ դրուած էր անձանօթ ձեռքի մը կողմէ: Ո՛չ միայն չէր կրնար լքել իր վայելուչ զգեստները, իր սենեակը, իր դասերը, ցնցոտիներով երթալ թափառելու համար պողոտաներուն մէջ կամ արօր վարելու, այլ նոյն իսկ չէր կրնար միտքէն անցընել այդ բաները: Երջանկութեան մօտենալու համար առնելիք առաջին քայլն էր ձերբազերծիլ հաճելի ու անշահ աշխատութենէ մը: Եւ ան իրաւունք ունէր այս ազատութեան, որովհետեւ կը տեսնէր ի՛ր ծնունդը ունեցող շատ մարդիկ, իրեն պէս զրկուած միտքէ ու ջիղէ, որոնք չէին աշխատեր և սակայն ուղածնին կ'ընէին:

— Իմ ալ, իրաւունքս է, ունենալ ինչ որ ուրիշները ունին, — կը մտածէր Սէրժ Բեթրովիչ, բնութեան և մարդոց դէմ ընդդիմօր իր շրջանին:

Ինք ալ, պէտք էր գտնել շահաւետ զբաղումներ: Ատոնց գլխաւորը

պէտք էր ըլլալ՝ ընութեան ուսումնասիրութիւնը, ոչ թէ հասկացողութիւնը ամէնէն խոր գաղտնիքներուն, — ասոր համար պէտք էր խելք ունենալ, — այլ անոր անմիջական ճանաչողութիւնը, աչքով, ռոնգերով և բոլոր զգայարանքներով։ Սէրժ Բեթրովիչ կենդանի ընութիւնը կը սիրէր փափուկ, անձկայրեաց սէրով մը, թէպէտ նախանձոտ կերպով մը կը ծածկէր այդ զգացումը։ Նովիքով միայն կուհած էր զայն։ Գարնան՝ խոտի չիւղ մը, խնկաւէտ հողէն բարձրացող ցարասիի ճերմակ կոճղ մը, պղտիկ, նուրբ, սեւ ոստերով, կառչած բարակ կեղևին, կը գրաւէին իր ուշադրութիւնը և կը հրճուեցնէին սիրտը։ Ձէր հասկնար թէ ինչո՞ւ կը սիրէր սեւ հողը, որ իրեն ա՛յնչափ վիշտ կը պատճառէր. բայց գարունին, երբ կը նշմարէր ցուրտ ու մեռելային ձիւնի կապանքներէն ազատած հողի առաջին պատառը, որ արեւին մէջ շունչ առնել կը թուէր, երկար տաք համբոյրով մը զայն պազնեւել կուգար, ինչպէս կը համբուրեն սիրուած կին մը։ Եւ, դատապարտուած ըլլալով իր ամբողջ կեանքը անցընել ուղղանկիւն նեղ խուցի մը մէջ, աղմկայոյզ ու փոշելից փողոցի մը վրայ, քաղաքին աղտոտ երկինքին տակ, կը նախանձէր դատարկաշրջիկները, որոնք իրենց քունին մէջ կը պահպանուին լուսաւորներէն, և որոնք գիտեն ու կը տեսնեն ա՛յնչափ բաներ։ Ինք, կեանքին մէջ բա՛ն մը չէր տեսած և չպիտի ալ տեսներ, բացի ցարասիներէ, խոտի չիւղերէ, քի՛չ մը խոր գետերէ և սարերէ։ Կարդացած էր ծովերու և լեռներու վրայ նկարագրութիւններ, վստահաբար ճիշդ, բայց իր տկար երեւակայութիւնը չէր կրնար ստեղծել կենդանի պատկերներ։ Ու կը տեսնար բուն իսկ իր աչքերովը տեսնել թէ՛ ճիշդ է որ ծովը խոր է ու անսահման, կապոյտ, կանանչ կամ նոյն իսկ կարմիր. թէ ճիշդ է որ հսկայ ալիքներ կը խաղան անոր վրայ, թէ անոնց վրայ կը սառառնին ճերմակ կամ սեւ ու սպառնալից ամպեր. թէ լեռները իրաւցնէ բա՞րձր էին ա՛յնչափ, ծառախիտ ու սեպացած, մառախուղով քողարկուած կողերով, կապտորակ, ձիւնածածկ կատարներով՝ որոնք լուրթ երկինքի մը տակ կը ճաճանչեն։

Բոլոր ասոնք իրա՞ւ էին։

Խոր ու սուղոզ հառաչ մը, որ կը թուէր փոշեպատ իր թռքերուն խորէն, ուռեցուց կուրծքը Սէրժ Բեթրովիչի և տարտամ յափտակութեան ժպիտ մը փայլեցուց իր տափակ դէմքին վրայ։ Ու ա՛լ աւելի կարօտը քաշեց անոնց՝ որոնք ծովերու և լեռներու վայելքը ունին, քան բոկոսմաներուն։

Օր մը, երբ քաղաքին մէջ կը թափառէր, ամբոխին մէջ փնտռելով անոնք որոնք հոգիով աղատ ու զօրաւոր էին և անոնք՝ որոնք յաւիտեանական անժառանգներ էին, Սէրժ Բեթրովիչ նշմարեց հաստատատիպ տեսարաններու հաճախապատկերի աղղարարութիւն մը։ Մտաւ։ Հոն կը ցուցադրէին Պալէարեան լիճերու և լեռներու և գղեակի մը պատկերներ։ Լուսաւոր պատկերները կ'անցնէին իր աչքերուն առջևէն. անոնք ա՛յնչափ կենդանի ու կարկառուն էին որ՝ զգալ կու տային այդ

տեղերուն մթնոլորտը և հեռակայ կապոյտը. ջուրը կը փափկէր՝ իբր թէ իրական ըլլար. և դղեակը ու անտառները ջուրին մէջ կը ցոյային: Ճերմակ շոգենաւի մը ցուելը, յստակ ու վճիռ, փրփրոտ ալիքներ կը յարուցանէր, և կախիկներն վրայ կային մարդեր, կիներ, տղաքներ՝ տօնի հազուադէպ հաղած. այդ դէմքերուն ճառագայթուն ժպիտը նշմարել կը կարծէր մարդ: Յետոյ Սէրժ Բեթրովիչ տեսաւ դղեակ մը՝ որուն աշտարակները և հերձոտ տանիքները կը շողային անտառներուն և քարափաղներուն վերեւը: Յետոյ եկան շքապանծ սրահները, զարդարուած անթիւ որմանկարներով, չքեղ գորգեղէններով ու թաւիչներով, ծանրագին դիպակներով. լոյսը՝ որ կը թափանցէր կոթական հսկայ պատուհաններէն՝ կը խաղար տախտակամածին վրայ: Պատուհաններէն մէկուն մէջ, կունակր հանդիսատեսին դարձուցած, մէկը նստած էր, հանդարտ ու անտարբեր դէմքով մը և կը դիտէր հեռուն, հո՛ն՝ ուր կը նշմարուէին լեռներուն կատարները և վճիռ կապոյտ երկինքը: Սէրժ Բեթրովիչ ուշադիր քննեց նստող կինը. և իրեն թուեցաւ որ կը նշմարէր ինչ որ միւսը ունէր աչքերուն տակ: Անտառները, դաշտերը, լիճերուն կապտորակ պողպատը. զգաց թարմ ու վճիռ օդը՝ զոր միւսը կը չնչէր: Մտածեց որ՝ այդ չքեղ սրահներուն մէջ, այդ մեծաշուք կամարներուն տակ, այդ լայն տախտակամածներուն վրայ, մօտը կալիական այդ պատուհաններուն՝ ուրիշ աշխարհի կէտը կը տեսնուէր, կարելի չէր որ գոյութիւն ունենային անբութիւն և մտալիկ խորհրդածութիւններ: Երբ համախաղաղութեան ցուցասրահէն դուրս ելաւ և նորէն ինքզինքը գտաւ աղմկայի ու նեղ գոհի մը մէջ, ուր ձիւնը, դուռապաններէն աւլուած գէղ-դէղ, նորէն ցրուած էր կառքերուն անցքէն, զգաց որ չկար բան մը՝ որուն մարդ ստիպուած ըլլար համակիրպիլ:

Մտածեց երաժշտութեան վրայ, արուեստի վրայ, ըլլո՛ր այն ձեւերով որ մատչելի էին իրեն, և որոնք կրնային լեցնել իր կեանքը և զայն շահեկան ու պէսպիսուն դարձնել. մտածեց կնոջ սէրին վրայ, որով ծարաւած էր իր սիրտը: Նուագահանդէսին, թատրոնին, փողոցին մէջ, կը տեսնէր դեղանի, շնորհայի, ազնուական կիներ ու անոնց սէրին կը ցանկար: Կ'երազատուէր անոնց մէջ մէկը, յաճախիկ հանդիպելու համար անոր. կ'երազէր անոր վրայ, բայց ան երբեք աչքերը չէր վերցուցած նայելու համար իրեն ու կ'անգիտանար իր գոյութիւնը: Յիշատակը այն աղմկան որ գեղի իրենց պորտէլին եզերքը չորցած տունկերը կը քաղէր, որ ձենձ ու քրտինք կը հոտէր և զինքը կը սիրէր, անհաճոյ էր իրեն, ինչպէս գաղափարը զինքը սիրող այն սափիկ կիներուն՝ որոնք դրամի և ատելի աշխատութիւններու վրայ խօսէին: Հրատոյնը կերպով կ'անձկար սիրտիլ այն նշանաւոր էակէն, որուն անունը չէր գիտեր, և որ անտեղեակ էր, իր՝ ինչպէս իր նմաններուն մէջ գոյութիւն ունեցող վրդովանքներուն: Դրամ չէր ունեցած երբեք և կը մտածէր որ՝ հարստութիւնը կրնար իրեն պարգեւել սէր. սէրի վրայ բա՛ն մը չէր գիտեր եւ կը կարծէր որ կին մը կրնար երջանկութիւն պարգեւել իրեն:

Այս միջոցին է որ Սէրժ Բեթրովիչ հանրատունի մը մէջ հանդիպեցաւ իր ընկերներուն: Հարբած չէր, որպէս զի կարենար յստակօրէն չտեսնել ինչ որ ձակատագիրը կը վերտապէ՛ս այդ միջավայրին մէջ, իրեն նման անձերու:

Ք Ր Ո Ն Ի Կ

Saison morte այլիմաստ բացատրութիւնը չարափոխելով, կրնանք saison de morts ըսել եղանակին՝ որ կը վերջանայ, եւ իրացնէ, «մահերու եղանակ» մը, ա՛յնչպիսիքս իր ղէմքեր կորսնցուցինք իրարու ետեւէ, կարճ միշտի մը մէջ, բաժնուելով մեր մէջ ներկայութենէն անձերու՝ որոնց ամէն մէկը հասակը իրութեան և սէրի մասնաւոր հմայքով մը տեղ գրաւած էր մեր սիրտերուն մէջ։ Ապահովաբար գէշ սկզբնաւորութիւն մը ըրած եղաւ Նշան Պէրպէրեան, այնչափ ցաւալի մահով մը գերեզման իշնելէն ետքը, յաջորդաբար իր ետեւէն կանչելով բազմաթիւ ծանօթ ու սիրուած ղէմքեր, ամէնքն ալ նշանակելի կեանքով մը ու դերով՝ սիրելի դարձած համայնքին ամէն խաւերուն մէջ, զանազան ասպարէզներու վրայ և առանձին առաքինութիւններով համարաւ մը, ամուսն մը, փառք մը սեփականած արժանաւորապէս։ Եւ ի՞նչպէս չցաւիլ՝ երբ անգամ մը շարքը ծայր տալով՝ մեր մէջէն կ'անհետանան ամէնէն թանկագինները կեանքերուն, որոնց կորուստին կարելի չէ՝ անտարբեր մնալ, ինչպէս հասարակ մահերու, — մահուանը որ և է Մարկոս աղբի մը կամ տիկին Իսկուկի մը, օրինակի համար, — հազիւ պզտիկ յիշատակութեան մը արժանի, և սգալի միայն իրենց տէրերուն համար, քանի որ որ և է մասնակի դեր մը կամ ծառայութիւն մը զիրենք չկապեր հանրային կեանքին, և հետեւաբար իրենց սուգը չկրնար բաժնել ու ողբալ հանրութիւնը հաւաքաբար, ինչպէս կ'ընէ մահուանը պարագային հիմնովին տուրբեր արժանաւորներու Այսպէս, շունչ առնելու չմնացած, մէկուն կորուստին ցաւը մոռնալու ատեն չեղած, իրարու ետեւէ մեր մէջէն անհետացան Կապին Նշան Պէրպէրեան, Յակոբ Ոսկան, Շամտանճեան Խան, Զափրաստ, Տիգրան Ճիվէլէկեան, ամէնքն ալ հանրային ղէմքեր, յիշատակելի իրենց կեանքով ու զօրով, և սգալի մէկ կամ միւս կերպով։ Եւ անո՞ր համար աւելի կը շեշտուի դառնութիւնը մահերու այս շարքին, որովհետեւ անոնց ամէնքն ալ, ճակատագրային զուգահիշ պնդութեամբ մը, կ'ընտրուէին մտաւորական աշխարհէն, կեանքերը բնական, լրագրական

եւ ուսուցչական աշխարհի զօրծիշներու, բացառութիւն չըլլալով նաեւ Գրիգոր Խանը, որ եթէ ուզուի մասնակցութիւնով մըն ալ չէր կապուեր մտաւորական կեանքին, սակայն բառին լայն առումով և բարձր իմաստովը Մտաւորական («ԻճՏԵԼԻՊԵՆՏ») մը եւ մտաւորական կեանքը անկեղծ ու մեծ սերող մըն էր, հետեւաբար բարձրօրէն արժանի մէկ անգամը այդ շրջանակին, քանի որ զրիչ շարժելով չէ՝ լոկ օր՝ մարդ կրնայ պատկանիլ այդ կեանքին։ Հրատարակչապարանապետ, դատարարակաւանատեղծ, զրազտ-վաճառական, դերասան-դատերազգիր, լրագրապետ-տնօրէն, անողոր խօսք-մէկով մը կը ձգեն մեզ ու կը մեկնին ղէ՛յի Յատենական Փունի վերջին խաղաղ հանգրուանը, ուր աշխարհային ո՛չ մէկ աղմուկ, ո՛չ մէկ մտաւորութիւն ու սրտմաշուք կը վրդովէ զիրենք։ Եւ երբ, իբր դառն հետեւանք այս ողբալի կորուստներուն, պզտիկ միթարութեան մը համար, որուն կը կառչի մարդ ղժբախտ պատահարներու մէջ, խնդիր ընենք թէ՛ անոնց անհետացումին պակասը կը լեցուի՞ ուրիշներով, նոր հասնողներով, ղժբախտ ու անելի հարցումի մը մէջ՝ կ'իշխանք, — այնչափ իրենց դերերուն մէջ այդ ղէմքերուն շահած դիրքը յատկանշական ու անփոխարինելի է։ Որովհետեւ, եթէ Պէրպէրեան տպագրիչ-հրատարակիչի անուն մը թողուց լոկ, — համեստ ու ո՛չ այնչափ մեծաշունդ անուն մը, — իբր զօրծին յիշատակը միշտ կապուած կը մնայ բացառիկ կերպով նշանակելի դիրքի մը՝ զոր քիչեր կրնան իրականացնել ու շահիլ՝ իբր արդիւնք իրենց կեանքին։ Եւ եթէ Շամտանճեան Խան եղաւ անհաշիւ ու բուխ-սիրտ բարեգործող մը, և հազուադիւս ձիւստելի գէնտա մը, իր դերը դարձեալ քիչեր կրնան արժեցնել, եթէ ոչ՝ ոչ ո՞ր. նոյն բանը մասնաւոր վերապահութեամբով միւսներուն համար։ Եւ ասոր համար չէ՞ որ կրկնապէս կսկծալի կը զառնայ անոնց կորուստը, և իրենց յիշատակը չի՞ ջնշուիր յիշողութիւններէ։

Սգախուրդ այս խօսքերէն անցնելու համար լրագրական այժմէական հարցերու, առաջին անգամ ուշադրութեան ներկայացող հարցը կ'ըլլայ լեզուական այն բանալէնը՝ որ ատենէ մը ի վեր կը յուզուի երկու զրաբարագէտներու միջեւ, և որ մանաւանդ այս միջոցիս,

հրատապ ընդթ մը առած է, լարուած հետաքրքրութիւնը արձնցնելով ընծերցողներունս Ո՞վ չզուշակեր թէ «սարել» կամ «սարբել»ի հարցն է ան, լեզուական բանավէճ մը՝ որուն լուծումին մէջ յարձական ելլելու զօտեմարտին նուիրուած են մէկ կողմէ Թաժուլ Վանանդեցին (Հ. Մէնէվիշեան) և միւս կողմէ Տ. Ելքէնճեան, իրենց ետեւը ձգած հարցին բուն պատասխանատու մարտադրողը, «Արէտ», (Յակոբ Գուրգէն) որ լուրջ ու հիմնաւոր պատասխանի մը յոյսին մէջ անհրկած, յանձնապատասխան փախուստի մը հրճուանքին կ'ապաստանի, իր համբարաւոր ու զուարճալի «ես», «աստ'նկ գիտեմ ետեւը առաջ բռնելով Ո՞վ պիտի հասկցնէր իրեն որ՝ լեզուաբանական հարցեր «ես»երով և կամահաճ բնահանձոյքներով չեն լուծուիր, այլ տրամաբանական ու հիմնաւոր փաստերով, լեզուաբանական օրէնքներու վերլուծութիւնով։ Պահ մը մոռնալով այս կէտը, հարցը ինքնին զուրկ չէ ուշադրաւ կողմերէ։ Առաջին յատկանշական պարագան աս' է որ՝ իր օրինական սահմանէն հեռացաւ ան ու ընդլայնուեցաւ մինչեւ անձնականութեան անհաճոյ եղբորը։ Ուրիշ բան է ճիշդ է թէ սխալ. ուրիշ բան է կրնա՞յ զործածուիլ թէ ոչ։ Ելքէնճեան կ'ըսէ ու կը հաստատէ թէ՛ սարել ծագումը գոյութիւն ունի ու լեզուաբանօրէն ան է ճիշդը, ինչպէս հին նոյնպէս նոր մատենագրութեան մէջ. ուրիշ բան որ՝ սարբել ձեւը նուիրագործուեր է՝ ժողովրդային բարբառին մէջ, անկէ անցնելով նաև մատենագրութեան, ուր որդեգրուեր է այլ, ինդիրը ուրեմն ճիշդին սխալին վրայ չէ, այլ զործածել թէ չզործածելուն։ Ի՞նչ պէտք ասիկա չհասկնալու համար ընդլայնել վէճը ու թափառիլ։ Երկրորդ ուշադրաւ պարագայ մըն է վիճարանութեան այն եղանակը՝ որ յայտնուեցաւ այս առիթով։ Նոյն ինքն գրական քննադատութիւններու մէջ վիճարանելու կոպիտ եղանակը զատառեւոր վանանդեցիի գրիչին տակ՝ ինչպէս կ'արդարանայ այն կրթութիւն ու անասն՝ ո՞նք, որուն հեղինակը իրեն ուղղուած համեմատապէս փափուկ սլաքներուն համար հակառակորդին դէմ ընդվզած ու զայն առաջնորդած պահուն հոն ուր՝ coming events cast their shadows before, ի՞նչ կ'իյնայ նոր օրինակներու մէջ լուրջ ու խոհական վիճաբանողի անվայել

ծշնամանքներու։ Համոզուի՞մ պիտի ուզէր ատենց, բայց ահաւասիկ իր փափկանկատ ու ծանրախոհ ? վիճարանողի բաւերը. — «Անմիտ գիտուն», «ողորմելի», «արեւոյնեան թելերը իր վիզն անցուցինք», «իւր ծուղակին մէջ իրմէ խոտտովանութիւններ առինք», «խմաստակ», «սուրիստ», «մարդուկ», «տղայամտութիւն», «բարբոնջանք», «ապիրատ զրպարտութիւն», «տղէտ», «տղիտագոյն», «ամենատղէտ», «ձեզի պէսներ», «պոռոտասուս նարտարութիւն», «ձեք խարդախութիւն», «խեղկատակ ծողրածութիւններ», Ասոնք արտասանողը կամ այս տեսակ վիճաբանութիւն մը վարողը երբ երիտասարդ մը ըլլայ՝ խաչը կը հանեն՝ իբր մոլորած գրիչ ու զրական լրջութեան, դատական պատկառազնեցիկութեան անընդունակ միտք։ Ինչպէ՞ս կ'ըլլայ ուրեմն որ ա զ իրաւացի պահանջումին անմիջ կը հանդիսանայ գրիչը քննադատի մը, որ երիտասարդ ալ չէ՛, դատական պատկառանքի զգեստն ալ ունի, և զրական խոհականութիւն, ծանր-զուխութիւն, պաշարին կը պահանջէ . . . ուրիշներէ։

Օրինակը ու դասը շատ նշանակալից է, որպէս զի աւելի երիտասարդներու և պաշարիւններու աւելի տէր չեղողներու չարմոխքիք է. Ա.

«ԱՅԱՍՈՍ»Ի ՆՈՐ ՆՈՒՆԵՐԸ

Տեղի չգոյութեան պատճառով, չհրցանք ծանուցանել մեր նոր նուէրը։ Ուրեմն յաջորդով։

★ Ուրախութեամբ կը շտեմ քե իշխածին Ս. Հայրապետ «Արեւիկայի պատմութեան» շիջող սուած է Տ. Գեորգեայի կապու երեցիակի, իւր գեանաստիւն իւր արծակիներուն եւ կարողութեան։ Ն. Ս. Օժուրիւնը միեւնոյն շիջող սուած է նաեւ հանգուցեալ Մամբիկ Սթապուկի։

★ Պարի ծանօթ ուսուցիչ Տիար Խաչիկ Խաչատուրեանի կազմակերպած անդիմակ «Սարգսի» պատահանկեալին, որ եղանակին շէղ երեկոյքներէն մէկը պիտի ըլլայ. եւ որ տեղի պիտի ունենայ վաղը գիշեր, Սոյիէրս Սթեքիս Իրախանիս արանին մէջ, նուագաւորիւնը պիտի վարէ Սիւննէնէն նուագախումբը՝ կազմաւած աւ. քողովիկ վարպետներէ։

★ Յաւուր կ'արձանագրենք մանր հանգուցեալ Տիգրան Էփ. ձիվէիկեանի իրոյ՝ Տիկիկ Թագուհի Պոյաճեանի, մայր Սուրհանգակի խմբագիր Տիար Յակոբ Պոյաճեանի։

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒՆՍԱԿԱՆ

ՍԻԷՆՔԻԷՎԻՅ ՍԻ ԻՐ ՆՈՐ ՎԷՊԸ

Այն հսկայ յաջողութենէն ի վեր՝ որուն արժանացաւ Quo Vavisը, Հէնրի Սիէնքիէ-վիցի անունը ա'յնչափ ժողովրդական է աշխարհի ամէն կողմը, որչափ ծննդավայրին մէջ բոլոնիացի հոյակապ գրագէտին: Միցքիէվիչի հայրենիքին մէջ, իր փառքը անմրցելի է: Անշուշտ, ան յաճախ առիթ կուտայ բուն յարձակումներու, պաշտօնակցական սոսկալի նախանձալուծութիւններու, բայց ոչինչ կը հսկակշռէ անժխտելի ու իրական ճշմարտութիւն մը:

Ամբողջ քաղաքակրթ աշխարհի միահամուռ դատաստանով, Quo Vadisի հեղինակը կը մնայ բոլոնիական գրականութեան հրապուրիչ ներկայացուցիչը, հռչակաւոր գրագէտը, որ կը խորհրդանշէ անոր ամէնէն յատկանշական ձգտումները և անջնջելի գեղը: Սիէնքիէվիցիի դիրքը իր ազդեցութիւնը ունի ամէնո՛ւն վրայ. ան կը տիրապետէ իր երկիրին գեղարուեստական արտապրութեան վրայ: Ան ամէնէն մեծ դէմքն է ժամանակակից բոլոնիական գրականութեան, որ ինքնին ա'յնչափ հարուստ է հռչակաւոր ու ալլազան տաղանդներով և որուն ծաղկումը, զարգացումը և ապշեցուցիչ կենդանութիւնը, ճշմարտապէս արժանի է հիպոսի և յարգանքի: Որովհետեւ կա'յ ամբողջ բոլոնիական գրականութիւն մը, խիստ գեղեցիկ, չափազանց շանեկան, մեծապէս ինքնատիպ, որ չէ զաղրած առաջդիմելէ տասնըիններորդ դարու ընթացքին, հետեւելով եւրոպական ընդհանուր գրականութեան բնաշրջութեան, դասականներու և ոսմանիքներու պայքարներէն ի վեր մինչեւ նոր ձեւակերպութիւնները խորհրդանշականներուն և անկապաշտներուն: Բոլոր հնարաւոր սեռերուն մէջ, — վէպ, ծաղրերգութիւն, քնարերգական բանաստեղծութիւն, պատմութիւն և գրական բննադատութիւն, — բացառիկ արժէքով զորժեր, կը հաստատեն բազմատեսակ աղբիւրները, աննուաճ կորովը և մեծավայելութիւնը ազգային իմացականութեան մը՝ որ չմեռնիր:

Սիէնքիէվիցի յաղթական տաղանդը և գործը պէտք չէ նկատուի լոկ բարեբաղդ երե-

ւոյթ մը, մասնակի եղելութիւն մը, Բոլոնիական գրական արտադրութիւնները ամբողջութեամբ նոյնասեռ ցեղ մը կը կազմեն. անոնք կը պատկանին արեւմտեան մեծ գրականութիւններու շրջանակին. և Quo Vadisի հեղինակը, հսկառակ իր գործերուն բոլոր շքեղութեան, ունեցած է իրեն արժանի նախահայրեր. ունի նաև ժառանգորդներ, մրցակիցներ, թերեւս նոյն իսկ փառաբաշտ ու յարգամեծար հակառակորդներ, որոնք իրենց կարելին կ'ընեն վերանորոգելու համար ներ. շնչումը և տարազը բոլոնիական վէպին, մանաւանդ արդի բարբերու ուսումնասիրութեան վէպին:

Այդ երիտասարդ վիպասաններուն համար, որոնք անընկճելի եռանդ մը ունին և որոնց զննողական իրապաշտութեան կամ անկեղծ քնարերգութեան արուեստական ձիրքերը չափազանց շահագրգռական են, նոր դպրոցի բոլոնիացի այդ վիպասաններուն համար, Հէնրի Սիէնքիէվիցի արդէն կը ներկայացնէ անցեալը, փառաշուք բայց յեղաշրջուած շրջան մը:

Եւ սակայն դարձեալ, իւրաքանչիւր նոր երկը հոյակապ գրագէտին, — միակը որուն հռչակը իր երկիրին սահմանները անցած ըլլայ և արժանացած համաշխարհիկ յաջողութեան մը նուիրագործութիւն, — Սիէնքիէվիցի իւրաքանչիւր նոր վէպը առաջ կը բերէ շահագրգռութեան ճրտապաշտ շարժում մը: Իր ժողովրդականութիւնը միշտ զղրիչ է ա'յնչափ ուսմիկ դասակարգին, որչափ գրական աշխարհին մէջ իր երկիրին, ուր նոր սերունդը կը փնտռէ անձանոթ գաղափարական մը և դիտողութեան ու ստեղծագործութեան աւելի՛ արդիական ձեւեր, բայց ուր՝ ո'չ մէկը կը փնտի գերիվերութեանը վրայ ազգային հոյակապ վիպասանին, կը հիանան իր վրայ ու կը յարգեն զինքը՝ իւր հանձնը մը, որ թէպէտ սահմանափակ, թերեւս, բայց որ ամբողջ ցեղի մը ներկայացուցիչն է, ինչպէս Իպսէն Սթանտինուեան երկիրներուն է, տ'Անիլիո՛՝ Իտալիանը, Լ. Նիբոլայէվիչ՝ Ռուսիանը և Գիբլինի՛ Անգլիանը:

Փառէ՛ք Աստուծոյն մէջը, Սիէնքիէվիցի վերջին պատմական վէպը, արժանացաւ հռչակին այն ընդարձակ, զուարճացուցիչ ու սրտառուչ երկերուն, որոնց մէջ

Ջրհեղեղին հեղինակը, ատենով, իր ասպարէզին սկզբնաւորութեանը ատեն, նկարեց կեանքի կենդանի դրուագներու շոն գոյութիւն ունին դարձեալ՝ զրաւիչ յատկութիւնները, սովորական ձեւերը և թեթեւ թերիները հոչակաւոր վիպասանին, ինչ որ պէտք է մատնանշել ամէնէն առաջ այս գիրքին մէջ, անանկ ժամանակամիջոցի մը, ուր պատմելու արուեստը՝ յաջող վիպասանի այդ նախնական կան կարողութիւնը՝ կը կորսուի հետզհետէ, այն մեծ շահեկանութիւնն է՝ զոր Սիէնքիէ-վից գիտցած է հազցնել իրադարձութիւններուն նիւթի մը՝ որ չունի փայլը ո՛չ նորութեան և ո՛չ ալ անսկնկալին՝ Վստահօրէն, հակառակորդութիւնը բոլորնիցի պերճաշուր ասպետներուն, ազնուական ու զմայրիտ ժազ Թացէվսքիին, արկածին հերոսը, Պուրօքէմսքի շորս եղբայրներուն, աւելի տխմար քան քաջալի, նրբամիտ Հայուն՝ Սիւնիզլաս Սիբրիանովիչին և ասպիրատ Բոնկօվսքիին, — նկարագիր մը՝ ուսումնասիրուած և պատկերացուած վարպետի ձեռքով, ամէնէն յաջողութեամբ գործին, — ամէնքն ալ հրատուր կերպով սիրահարուած գեղանի Աննէթ Սիէնքի, որ մինչեւ բարձր գոհողութիւններու խիզախող հակառակորդութիւն մը կը ներշնչէ իր տարփաւորներուն, և որ ուրիշ մէկը չսիրեր բայց եթէ սիրահարական դերեր կատարող Թացէվսքիին որուն կը պատկանի գիրքին վերջը, ասոնք բոլորը կը զուշակուին վէպին սկիզբէն, և այս տեսակետով, վէպը ոչինչ ունի յազգի։ Ո՛րչափ անգամ ներ պատմական վէպի վարպետներ նկարագրած են այդ բանը, բայց ա՛յնչափ կորով, կենդանութիւն, խոհականութիւն և մանաւանդ լայն նկարագրութիւն կայ Սիէնքիէ-վիցի վէպին մէջ որ՝ նրութիւն տարակուսելի կը ջնջուի և կը մոռցուի Անոր մէջ զգալի է կախարդանքը միշտ երիտասարդ, պայծառ ու թովիչ տաղանդի մը, Հոն ո՛չ միայն կեանքի ճշգրիտ նկարագրութիւնն է որ աչքի կը զարնէ, այլ նաև այդ միջավայրին անցնող սերունդներուն հոգեբանութիւնը, կեանքը ըմբռնելու, սիրելու, ատելու իրենց կերպը և Սիէնքիէ-վից կը յաջողի այդ նկարագրութիւններով յուզել հոգին և վերապրեցնել

այդ կեանքը, Վստահօրէն այդ մենամարտները, սիրային հակառակութիւնները բիշ մը միօրինակ կը թուին, բայց վէպին ընդհանուր փայլը՝ կը մոռցնէ այդ բանը, Անկարելի է այս հաճելի ու նկարչագեղ վէպին մէկ ծայրէն միւսը ընթերցումը չաւարտած ձեռքէ ձգել, և էպպէս մտացածին սեռերու բիշ մը վիճելի գեղեցկութեանը մասին ամէնէն խստապահանջ ընթերցողը չկրնար գերազանց հաճոյք մը չզգալ անկէ։ Ասկիւս լուսագոյն դրուատիքն է՝ զոր կարելի է ընել վէպի մը մասին, և ձեռի ու շարադրութեան անփոյթ վիպասաններ պէտք են ուսումնասիրել Սիէնքիէ-վիցի վէպը այս տեսակետէն, որովհետեւ փիլիսոփայ մը իրաւունք ունի ձանձրացուցիչ ըլլալու, բայց վիպասան մը երբեք։

ԱՄՈՒՍԵՆՈՒԹԻՒՆ

Դրական համակրելի շքանակի մը մէջ, երկուշաբթի օր, Բեռա, Ս. Երրորդաբիւն եկեղեցին՝ Տեղի ունեցաւ մեր պաշտօնակից Ծաղիկի խմբագրութիւնը մարմնացնող զոյգին՝ ծանօթ գրող Տիար Վահան Թօշիկեանի ամուսնութիւնը՝ Օր. Հայկանոյ Մառի հետ, կնիսնայրութեամբ Մանգումէի խմբագիր Տիար Յակոբ Տեր-Յակոբեանի։ Եկեղեցին շէնորհեաւ զարդարուած եր եւ գրաւուած հարսնէտներու ընտրուած քաղմութեան մը, գրական, ուսուցչական եւ ուրիշ ծանօթ դիմիւրի կազմուած։ Հանդիսին կը նախագահէին Տ. Հմայեակ եւ Տ. Գեորգ սրբազանները, շքապատում վարդապետներ եւ ֆահմաններ, որոնց մէջ կը գտնուէր նաեւ փեսայի մեծ-հայրը ծերունագար Տ. Իննետիոս Ա. Բաճ. ձիգմեան։ Զեռնօրութիւնը կատարեց Տ. Գեորգ Բաճ. Անանեան եւ Տ. Հմայեակ սրբազան խօսեցաւ գեղեցիկ խոսք մը, ամուսնական կեանքի գեղեցկութիւններուն վրայ ակնարկ մը նետելով եւ դուռնաբացի հարսին ու փեսային ձիգմեանը։ Պատկէն ետք՝ հարսնէտները առաջնորդուեցան Արհեստագիտական, ուսումնական եւ ուր Տեղի ունեցան պարեր, զորս վարեց ծանօթ դերասաններ Տիար Լեւոն Գիւմիշեան։ Հարսը սաացաւ քաղմութիւն ունէր։ Մասին իր սրագին ընդհանրութիւնները կը յայտնէ իր յարգոյ պաշտօնակից նորապսակ ամուսնին, Տէր եւ Տիկին Վահան Թօշիկեանի։

Հիմնադիր. Կ. Ս. ԻԿԹԻԺԵԱՆ։ Սրբանք. ՏՕԳԹ. Ե. ՄԱՍԻՍ։ Տպագր. ՍԱԳԱՅԱՆ

Թիւ 2. — «Խնչո՞ւ ծնողքներ չեն ուզեր, յաճախ. — Ազգիկ զաւակներ ունենալ», կ'ըսէք. — Ի՞նչ դիւրին խնդիր. — որպէսզի երբեք. — Ձեր մարի իրենց տուններուն... օճախ, — Դրամօժիտի այն դումարներով. — Ձորս կը խնդրէ ամէն ամուրի. — Առած դրամովն սասկ զոնէ խերով. — Ապրեցնելու համար իր... հուրի:

ՏԻՐԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Բ. հարցում. —

Ո՞ր թաղին Հայ գեղուհիները սիրելի են ամենէն աւելի եւ ինչո՞ւ: Պատասխանները պէտք է կարճ և սրամիտ ըլլան: Կ'ընդունուին մինչեւ հորեքշաբթի իրիկուն: Նուէր եռամսեայ Մասիս:

«ՄԱՍԻՍ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ. —

Բազմաթիւ նամակագիրներ եւ յօդուածագիրներ կ'առաջարկեն առանձին նամակով պատասխանել իրենց հարցումներուն՝ գրուածքի մը, բանաստեղծութեան մը կամ գրական հարցերու վրայ: Կ'ուզենք միանգամ ընդ միշտ դիտել տալ թէ՛ չենք կրնար գոհացում տալ յօդուածագիրներու այդ բազմանքին՝ որովհետեւ այն ատեն պէտք ենք միայն անհամար նամակներու պատասխաններով զբաղիլ, մինչ արդէն մեր փամփանկը ա՛յնչափ քիչ է՝ Մասիսի խմբագրական-վարչական ընդհանուր զրադուսներուն խօսք համար:

«ՄԱՍԻՍ» ԵՒ ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Հազիւ արձագանգած Մասիսի կոյը մեր վարժարաններու վարիչներուն՝ հաղորդելու համար իրենց սաներէն տարեկան, վեցամսեայ կամ եռամսեայ քննութիւններու մէջ առաջին հանդիսացողներու անունները, Մասիսի մէջ հրատարակուելու նպատակով, քաջալերութիւն մը ըլլալու համար իրենց, աշխատութեան գրգիռ մը՝ ուշիմ ուսանողներու և գոհունակութեան առիթ մը ծնողքներուն, — և ա՜նա մօտաւոր զաւառներու տեսուչներէ նամակներ կը հասնին մեզի՝ յայտնող իրենց գոհունակութիւնը և ուրախութիւնը Մասիսի այս օգտախնդիր ձեռնարկին համար: Ուրախ ենք մեր ձեռնարկին լուրջ տեսուչներէ գտած այս ընդունելութեան համար՝ որուն արժանի էր ան, Երզնկայի Կեդր. Ուսումնարանի Տնօրէն Տիար Զարմայր Ճերմակեան կը հաղորդէ մեզի իր վարժարանի սաներուն քառամսեայ քննութիւններու մէջ առաջին

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթերթ ազգային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 զրշ. գաւառներու համար 108 զրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր. Հասցէ՝ Ղալաթլու, Քամանտօ փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ լուսնոգակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

հանդիսացողները, որոնք են. — Է. կարգ. Պ. Մ. Չէօկիւրեան: Զ. կարգ. Պ. Գէորգ Շիւքրանեան: Ե. կարգ. Պ. Մարտիրոս Զուրիկեան: Դ. կարգ. Պ. Հայկ Ալթունեան: Գ. կարգ. Պ. Մկրտիչ Պոյաճեան: Բ. կարգ. Պ. Գարրիէլ Մանուէլեան: Ա. կարգ. Պ. Աղեքսանդր Մարտիրոսեան:

Դիշ. — Այս նպատակով մեզի զրկուած ցանկեր՝ պէտք է կրեն Առաջնորդարանին կամ վարժարանին տեսչութեան կնիքը՝ իրր վաւերացում:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր բաժնորդագիրը. — Տեարք. — Տիգրան Թօքաթեան, Յարութիւն Աղանեան, Սեպուհ պէյ Մազսուտ, Յակոբ Եսայեան, Պ. Պապուսարեան, Տիգրան Գալուստեան, Գեր. Տ. Եղիշէ վրդ. Ջիլինկիրեան, Գուրգէն Էմմէքճեան, Վահան Հիւսիսեան, Մարտիրոս Գարրիէլեան, Գրիգոր Կ. Գալուստեան, Արմենակ Սարգիսեան, Ստեփան Աստարճեան, Յակոբ Չէրքէղեան, Կարապետ Արիֆեան, Բարթոլ թէլեան, Յակոբ Պաշի, Ռօթօմ Ռօթօմեան, Գէորգ Սինէմեան, Աւետիս Կիւլպէնկեան, Արմենակ Խաքումեան, Երուանդ Փիրուսեան, Կիրակոս Բեհնէճեան, Ժողովրդային Ընթերցատուն, և Օրբ. Պայճաւ Տայեան, Հայկանուշ Յարութիւնեան:

ԱՐՈՒՄՆՈՒԹԻՒՆՆԵՐ. Տիար Աւետիս Կիւլպէեան՝ առանցած Օր. Նուարդ Մամիկոնեանի հետ: — Տիար Յովհաննէս Նահապետեան՝ առանցած Օր. Տիրուհի Վանեանի հետ: — Տիար Յովհաննէս Դոգեան՝ առանցած Օր. Փեքրոնիկ Մովսէսեանի հետ: — Տիար Եղեկիկ Թօխմախեան՝ առանցած Օր. Երանեակ Դաշագեանի հետ (Ակիւտար): ԱՍՀԵՐ. Կարապետ Կիւլպէեան. յուլարկ. Գաւրբոյ. Թաղում Ֆէրի-Բէօյի գերեզմ.: Արշակ Կիւլպէեան. Դաւանեան. յուլարկ. Բուսէլի Հիսարի եկեղ. Թաղում տեղին գերեզմ.: — Մահ. Տիկիւն Տիրուհի 102 տարեկան:

ԳՐԱԿԱՆ ԽՆՁՈՅԻ՝ ՍԱՐԳՈՒԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ՝ ԸՆԹԵՐՑՈՒՄԵՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ. — «Բարեկամ ամենցուն»։ Տօքթէօն Յակոբոս Կիրակոսեան. զին 15 զրդ. «Առձեռն Նամականի» (7)։ «Նշանագիր հայ. և զաղ. մարքայի համար. Խ. Մ. Թահաճեան (5) «Թափուք պէպէժէք» Մ. Էմբրեան (5)։ «Լքուած Բնար» Արտաշէս Յարութիւնեանի (5)։ «Թէ ինչպէս պէտք է պարել» Միհրդատ Ն. Պարոնեան (5) «Հիւժախտի դարմանը» Տփթ. Յ. Ա. Գնաճեանի (3 1/2)։ «Երջանիկ մարդ մը» Կառթոն Պէրժրէ (5)։ «Մանր ուսմունք երկրագործական տարրաբանութեան և երկրաբանութեան» Ճ. Ֆ. Վ. Ճօհնսթըն (4)։ «Բօպէնոն» (4)։ «Ժողովրդական Տարեցոյց» 1907 (3)։ «Ընկեցիկը» (բարոյական վէպ) (2)։ Այս 12 հատոր փառկան։ առողջապահական, բանաստեղծական են. զիրքերը, փոխանակ 60 զրդ. կարելի է առանալ միայն 20 զրդ. փոխարէն Զարդարեան եղբայրներու գրատուններէն. գաւառներու համար 7 զրդ. աւելի, իր փողի ծախք։ Հասցէ Զարդարեան Կրասնոն, Պոլիս Զաւանճըլար, 22-23

ՏՕՒԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐՍ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար և երկար տարիներէ ի վեր կը դարձանէ ստամոքսի, աղիքներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին-և նոր գաղիական արտերը: Այս վերջին արտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ, Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զորեքաբժի օրերը միայն ձրի:

(8—10)



Զեռքի, ոսքի ու ոսքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

մեքենան լաւագոյնն է՝ այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Այնկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատուններուն մէջ՝

ՇԱՐԱԲԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|--------|--|
| ԿՍԱԹԱ | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, 343 և 343. |
| ԲԵՐՍ | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ, |
| | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊԱՆԱՏ | 1. Սուլթան Համամ. |
| | 2. Սուլթան Պէյաղլու, Թրամվէյի կայարանին դէմ. 13. |
| ՍԿԻՏԱՐ | 2արշը Պոյու, Թ. 120. |

ԴԱՍԵՐԸ ԷՆ ՆՈՐՈԳՈՒԽԻՆՆԵՐԸ ՏՐԻ.

Կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

(9—10)

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և զաւառներու համար տարեկան

6) շրջ.:

Արտասահմանի

» »

1) ֆրանք:

Թղթատարութեան ծախքը մեր վրայ:

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները, միշտ ձերիւրար, Թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:

Զննատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

در علیہ غلطہ فورسوںلی خاندہ نومرو ۷ «ماسیسی» غزتمسی اداره خاندہ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Գուրումլու խան, քիւ 7, Կալաթա, Կ. ՊՈԼԻՍ

Rédaction de la Revue «MASSIS»

Nº. 7, Courchounlou Han, Galata, CONSTANTINOPLE

ԿԻՆԸ

ՀԵՂԻՆԱԿ ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՄԱՍՈՒԼԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Այս անգամ պատմութեան ամփոփումը մը կը ներկայանայ Ենով Արմէն: Այս գիրքով չէ՛ որ պիտի հաստատէր սա նշանակութիւնը քէ իր գրագրի, իննախոյի կարողութիւններուն կը միացնէ վիպողի սաղանդը:

Կինը բացի իր գրական արժէքէն, սպագրական տեսակետով ալ ուսագրաւ նորութիւններ կը պարունակէ: Ճաշակատու ու սիրուն հասար մըն է, որ փափաք կը ներշնչէ մէկ ծայրէն միւսը կարգալու:

Ենով Արմէն (Կինը) մէջ կ'զգուանայ այն միւս գրականութեան, կ'զգուանայ անարեւ մեծ սենեակներու վարագոյրներուն ետին դալկացող կեանքէն. իր ուզածը դուրսի կեանքէն է, Կեանք, գլխագրով. արեւին տակին, իր յոգ աշխատութեան մէջ: Իւ նաեւ, իր մօտ փառաբանող մը կայ շարդկային սկզբնական վաղնջական բնագոյններուն, զոր երկինք կը հանէ, գլխագրով մը: Ենով Արմէն յստա օրէն sensualiste, զգայական կամ զգայապաշտ է, առանց որ եւ է անպարկեշտութեան:

Անուշտ ամէն գրատէր պիտի փափաքի ունենայ Ենով Արմէնի այս նրասարակութիւնը, Կինը, գրական գեղեցիկ վայելք մը ընթերցելու համար:

Կինը, հեղինակին գրչի այդ առաջնեկ զուակը, նորութիւն մըն է իբր յղացում:

Կինը իր գրական արժանիքին կը միացնէ սպագրութիւն մը հիմնապէս առօրինակ ու բոլորովին նոր նաեակով, որ կը յաջանէ Կինըին համակրելի հեղինակը:

Երեսասարդ հեղինակը, որուն գրութեանքը այնքան հաճոյքով կը կարդացուին օրաբերքներու եւ պարբերական հանդէսներու մէջ, այս անգամ իր մտածումները խաղաղօրէն տարուծելու ու կոնիկ հասարի մը մէջ, որուն սպագրութիւնը, բոլորին ազնուութիւնը եւ գեղեցիկ նաեակը հաճոյք կը պարգեւէ ընթերցողին ունենալու անկէ հաս մը: Զննատարակ յանձնարարելի է այս գաղտնի հասարը:

Իր ընդհանուր հանգամանակով Կինը կարդացուելու արժանի գիրք մըն է յաւաքովն աշխատութիւններէն հեղինակին:

Դին 5 դրուշ, Կը զանուի ամէն գրականութի քով: